



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





1 MAR 2010


Հրատարակութիւն Ն. Մատինեանի

Բ. Շ Տ Ե Ր Ա

ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Թարգ. Լ. ԲԱԲԱՅԵԱՆԻ



ԹԻՖԼԻԶ

Էլեմասուրդ պարտահան «ՀԵՐՄԱՆ» բնկեր,
Մազարեան փողոց 15.

1905

114

12 JUL 2013

351.74
8795

08 5

✓ 934/

Р. 8 8 4 1 4

ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒՐԳԻՍՑԻՑ

1004
4799
004
TK

Թարգ. Լ. ԲԱԲԱՂՅԱՆԻ

(Արտասուզած «ՄՈՒՐՃ»-ից)



Հրատարակութիւն Ն. Մատինեանի

ԲԻ
26-5

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Էթեմատայդ Տպարան «ՀԱՐՄԱՆ» Ընկ-
Մատարեան փող. № 15
(124)

39.409

15 JUL 2013

5785 A

ወጥጥሮች የጊዜዎች

848.0-99-7449 935948200 33009408440

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. 26-го августа.

(*Ил-20* в *ЛНР* бывшему подчинению)

đã minh họa cho khái niệm này.

ԱՐԵՎԱՏՅԱՆ
ՀԱՅՈՒԹՅԱՆ Պատուի Եվրասիական
ՀՀ Հայ Բաժգարան
(ՀՀ)

բայ մի մեծ ըրբ գրիչացաց և նույնական հիմք տադի
-ուսար զգացու բժիշամին ուժուու պատճենացն և վեցամ
-ու բա գալլ ով առարջան ուր բան և յանական վեճրայի
շնչան տանեացացու այնաերաց և մեջբայխար դատապահ

առաջ մ դիմում մտցանակ մեջ հայրակ Խոսկօթ ք

ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ

(P. 8 s b r 6 p)

Պալմուրական պատվարներ Խիլքը այց

աղքարման հիմունը **Ա.** այս վայրութեա աշխա պատր

Ասէիանութիւնը եւ յրտնութիւնը Արդու Համիլ Բ.-ի տերութեան մէջ:

00-1185 00000 00000

Կոստանդնուպոլիսի ֆիլիփօնոմման: Նախանձ հացի համար: Արգալաւագութեան վեց մասը:

ատառախում: Աստրահանութեաբ և սրա սոսինիքը: Մո բարեկամ Թանին
ուլթանի անձնական (Leib) սատիկանը: Այց սատիկանութեան նախարար
ազգի փաշային: Ներկայ սատիկանութեան կազմակերպութիւնը: Զափթիա-
կը, գողեր և ընկերութիւն: Կէս-սատիկանութիւնը: Բէջջի, չաշալ, քայլ-
ի թուլումբաչի: Դիսցիպլինայի բացակայութիւնը վարչական բոլոր
ասկրում: Լըտեսութիւնը: Պալատական լրտեսներ: Պատմական ուղղութիւն-
եր: Լըտեսութեան ընախօսութիւնը թիւրբիայում: Սուլթան Մուրա-
փ կսիւր լրտեսների դէմ: Լըտեսութեան յաղթանակը Արգիւլ Համբիկ
րով: Լըտեսների ասացնորդ Անմէդ Զէլալեգդինի մըցութիւնը Քատրիի
ետ: Ազատութեան հերոսից լրտես կամ նադիր բէյի պատմութիւնը: Ար-
անձնական լրտես Մէհմեդ Ռասուֆի կարիերան: Լըտեսութեան մի զուար-
այի պատմութիւն:

կ. Պոլիսն աշխարհիս ամենավիթիսարի քաղաքներից
է:

Օսմանեան տէրութեան մայրաքաղաքը տարածւում
Աև Ծովից մինչև Մարմարա ծովը, Բոսֆորի և Ոսկեղջուրի
բայց Նա իր բառնցքների մէջ սեղգում է մի կտոր Ասիա և
ի կտոր Եւրոպա: Կ. Պոլախ ոտքերի տակ փռուած են քսան
բռուարձաններ բազմազան ազգաբնակութիւններով, որոնք բազ-
ացած են թիւրքերից, քրդերից, յոյներից, հայերից, ճրէաննե-
րից, պարսիկներից, թաթարներից, զնչուներից և վերջապէտ
բռոպացիներից ու ամերիկացիներից:

Ո՞վ է հաշում այն ազգերը, որոնք այնտեղ միասին ապ-
ում են, կամ ովք կարող է թուել այն անվերջ խմբերը, որոնց

վրայ կրկին բաժանում է իւրաքանչիւր ազգ: Ամեն մի ազգ կարելի է հեշտութեամբ հարիւր՝ միմիանցից տարբեր դասակարգերի բաժանել և մարդ գեռ ստիպուած կը լինի այդ հարեւաւոր դասակարգերն էլ բազմաթիւ ստորաբաժանումների վերածելու:

Կ. Պոլսում ապրում են զանազան տարրեր և խառնուածքներ: Դրանք բոլորն էլ միայն մի բանով նըման, հաւասար են միմիանց: Միևնույն է ինչ ազգի կամ ինչ դասակարգի էլ նա պատկանելիս լինի, միշտ աշխատում է ուրիշի հաշւով ապրել: Այդ բանը կարելի է վկայել մեծ վեղիրից սկսած մինչև ամենավելջին բեռնակիր-համալի վերաբերամբ. այդպէս է վարւում եւրոպական ամենապատուաւոր զեսպանից մինչև եւրոպացի ամենաողորմելի բաղդախնդիրը:

Թիւրքին ընդհանրապէս գեռ ևս անծանօթ է այն զազափարը, որին մինք հայրենասարութիւն ենք կոչում: Նա ունի միայն կրօնական հաւատարմութիւն կամ աւելի ճիշտն ասած կրօնական մունանդութիւն: Խալիֆան նրա համար մինչև այցը միշտ բարձր է եղել, քան սուլթանը, իսլամը աւելի բարձը, քան օսմանեան աէրութիւնը՝ օսմանականութիւնը: Եթէ երբ և իցէ խալիֆայութիւնը սուլթանութիւնից բաժանուի, այն ժամանակ թիւրքերի աշքում ներկայ Սուլթան-խալիֆը երկրիս վրայ Աստուծոյ ստուերը, հազիւ ստուերի ստուերը լինի:

Եթէ որեէ արար Ստամբուլ է գալիս և իլլըզ-Քիոչկում սուլթանի պալատում տեղ է գտնում, այն ժամանակ նա աւենից առաջ աշխատում է թիւրքին ձնշել: Սիւնի թիւրքն էլ իր կողմից է ատում ու հալածում շիա պարսկին: Քուրդ համալը հայ բեռնակրին սպանեց ոչ թէ բազմաքական-հայրենասարական հիմունքներից զրդուած, այլ միմիայն իր հացի մրցակցից ազտառելու համար:

Կաթոլիկ հայը լուսաւորչական և բողոքական հային աւելի որբինուուշ կերպով է հալածում, քան բուրգը, յոյները, սկրբերը, բուղարները, սև լեռնցիք և վալախները, չնայելով որ միւնոյն կրօնն ունին քրիստոնեային, բայց այնուամենայնիւ միմիանց վերաբերմար մահացու թշնամիներ են: Էլ չեմ ուզուտ ասել եւրոպական տարբեր ազգութիւնների մասին:

Ճշմարիտն եմ ասում, բոլորովին զարմանալի չէ, որ այնտեղ բարքերը վայրենացել և պատուի գաղտիարները շփութուել են:

Արգարագատութիւնը չէ կարող կուսակցութիւններից բարձր կանգնել: Նա ոչ թէ ոյժ է ներկայացնում, այլ ուժաս-

պառութիւն՝ թուլութիւն: Նա ներկայացնում է ոչ թէ մի ամբողջութիւն, այլ բարբարոսական մի կարկատան:

Կ. Պոլսում բացի զանից իւրաքանչիւր հիւպատոսարան ունի իր յատուկ դասաւորութիւնը և ծաղրում է թիւրքական դասաւորները և օրէնքները:

Իսկ թիւրք զարմանալի կառավարութիւնը և նըա պալատական քաղաքագէտները, Տէր Աստուած, միթէ զրանցից էլ աւելի տարօրինակ բան կարող է լինել: Այդ թիւրքական կառավարութեան մինիստրները, ոչ այլ ինչ են եթէ ոչ երկիւղից ձուլուած բոնակալութիւն: Նորմալ զրութեան մէջ չեն գտնուում նաև տեղական կամ օտար պետութիւնների դիպլոմատները, որոնք այսօր ամեն ինչ ուրանում են, ինչի համար նրանք երեկ նոյնիսկ երգուել են: Եւ սրանից էլ ըստ ինքեան հասկանալի է, թէ իսկապէս ինչ կարող է լինել թիւրքական տէրութեան ոստիկանութիւնը:

Ահա ձեզ ոստիկանութեան մինիստրը: Զնայելով որ նա ներքին գործոց նախարարին է հպատակուում, բոլորովին ուշադրութիւն չէ զարձնում ոչ միայն նըա, այլ և նոյնիսկ մեծ վեղիրի վրայ: Նա շարունակ որոգայթներ է լարում երկուսի գէմ և զրա համար էլ նրանցից աւելի զօրեղ է: Նա տեղեկութիւններ է հազորգում միմիայն Սէրային և միայն այնտեղից է պատուէրներ ստանում:

Անցագրային վարչութիւնը ոստիկանութեան նախարարութեան մի մասն է կազմում: Բայց այդ անցագրային վարչութեան վերատեսուչը թէզքերէ (անցագիր) բաց թողնելու ժամանակ անազին զժուարութիւններ է ստեղծում, եթէ նոյնիսկ ոստիկանութեան մինիստրը պատահմամբ անցագիր ցանկացողի համար երաշխաւորում է: Զէ որ այդ երկու պարոնները միմիանց մահացու թշնամիներն են և զրանցից ամենափոքրը ամենաուժեղն է, որովհետեւ իր մեծի գէմ Սէրայում որոգայթներ է լարում:

Ներքին գործոց մինիստրն էլ նրանից պակաս չէ: Նա էլ նոյնպէս իլլիզ-Քիոչկում ոստիկանութեան մինիստրի և Պետրայի, Բէշիկթաշի և Սկիւտարի նահանգապետների գէմ, որոնք իր ստորագրեալները և միւնոյն ժամանակ մրցակիցներն են, ինարիկաներ է սարքում:

Իսկ զրանք բոլորը միասին զողում են պալատական ոստիկանութեան զիմանացից՝ ալբանացի Թայիր փաշայից, որը կարգավ, մինչև անգամ իր անունը գրել չփիտէ, բայց չնայելով զրան աւելի զօրեղ է, քան վերոյիշեալ բոլոր պաշտօնեաները միասին: Ժամանակ առ ժամանակ երեան է գալիս պալատա-



կան որևէ լրտես, որը սատիկանութեան դեր է խաղում և նոյնահակ գործում է ընդգէմ իսկական սատիկանութեան:

Այդպիսի մի լրտես էր և մի ուրիշ ալբանացիք Արդուլ Կանի թէյ անունով վայրենի հսկան, որ սուլթանի անձնական սատիկանն էր և ամբողջ սատիկանութիւնը նրա առաջ ծունկ էր չոփում:

Նա Սուլթանի ազջիկների անձնական սատիկանն էր և նրա այդ ազջիկների ամուսինները անհաւասարիմ դարձան, Կանին այդ մրցակցումներին մէջտեղից անյայտացրեց:

Նա բարքերի մի այսպիսի բնորոշ սատիկան էր, որի նըմանը աշխարհն հազիւ տեսած լինի: Որովհետեւ նա ժղթախաղը և անառակութիւնը սաստիկառում էր, դրա համար երբեմն յանկարծակի մտնում էր Պերայի անառականոցները և թղթախաղարանները և շուայտասէրների ու խաղացողների ձեռքից փողը ուժով խլում էր, սպանալով իր առրճանակով:

Օրինակ, միանգամ նա միայնիրերկու ուղեկիցներով մտաւ Պերայի թիմոնէ փողոցում գտնածող Արտեմիզիա անունով յայտնի կոտջ տունը: Բայց որովհետեւ այդ տունը յաձախորդներ ունէր և դիպլոմատիկական մարմին հովանաւորութիւնն էր վայելում, դրա համար օտար պետութիւնների գենալանութիւններից մէկի առաջին թարգմանը, որ մի փառաւոր և ասպետ մարդ էր, զնաց Սուլթանի ծու և պահանջեց վերոյիշեալ աւագակին պատժել: Սուլթանն էլ խոսացաւ թարգմանին և Կանին կանչեց իր մօտ բացմտրութիւն տալու:

Կանի, և այստեղ, դռն շնչն Կանի, առում է նրան Սուլթանը: (Նա բոլորովին լուս մուտենում է Սուլթանին). Ճէշտ է, որ դու յարձակուել և Արտեմիզիայի տան վրայ:

— Այն, Տէր, պատասխանում է Կանին ցածր ձայնով:

Դու սպանացք և նա այնտեղի մարդկանց ատրճանակով, առելացնում է սուլթանը:

— Այն, Տէր արքայ, վրայ է բերում Կանին: Ինչու համար այգպէս վարուեցիր: Քեզ ճարկաւոր է պատժել սպանում է նրան Սուլթանը մոայլուած:

— Վեհափառ Տէր, ես այգպէս վարուեցիր, որովհետեւ կարծում էի թէ այնտեղ գտնուաղ մարդիկը ուզում են քու գէմ գաւաղութիւն կազմել:

— Այգպէս ուրեմն: Դէս այժմ կարող ես գնալ, ես քեզ կը վարձատրեմ, Կանի թէյ, առում է Սուլթանը ժպաալով:

Դրանից յետոյ Կանի թէյը իր քաջագրծութեան համար առատ կերպով վարձատրուեցաւ և դիշեր ու ցերեկ հսկում էր Սուլթանի ննջարանի մօտ:

Եթէ մի կողմ դնենք նրա միւս զժութիւնները և յափտակելու ու սպանելու վատ սովորութիւնը, այն ժամանակ Սուլթանի այդ թիկնապահը մի բոլորուիլին փառաւոր և սիրալիր մարդ էր և ափսոս որ նա մի քիչ երկար չապրեց: Վերջապէս սատիկանութեան յաջողուեց իր համար անյարմար այդ ոստիկանակցին, որ ներում էր իր զատապարտած մարդկանց և բանարկել տալիս իր աղատածներին, վերջ դնելու նրա կեանքին: Մի անդամ հրապուրեցին իմ սիրելի բարեկամ Կանի թէյին Պերայի մի գինսաւուն մանելու, որտեղ ծագած մի կուոք ժամանակ սատիկանութեան զիխաւոր Հաֆիզ թէյը ողանեց նրան: Մարդասպանը տեղն ու աեզզ անյայտացաւ, որին քիչ չնպաստեց հէնց իսքը սատիկանութիւնը...

Վերջին աարիների թիւրքական սատիկանութեան ամենանշանաւոր մինիստրը Նազիմ փաշան էր, որի հետ ևս ծանօթացայ 1895 թ. մարտ ամսին, երբ զնացել էին նրան այցելութեան, որպէսզի հայկական խոռվութիւնների մասին մի քանի տեղեկութիւններ հարցնեմ: Նրա կոնակը զտնւում էր Ստամբուլում, Բայազեղի հին և հոչակաւոր մզկիթի մօտ: Եռ կառքով անցայ Մէջիթի լայն հրապարակով և մտաց մի նեղ, ծուռ և անձանաչելի փողոց, որտեղով երկու կառքեր հազվու իրար մօտով կարող էին անցնել:

Թիւրքական սատիկանութեան ամենազօրեղ մի մինիստրի կոնակը փայտեաց մի հին, ողորմելի շինութիւն էր, որ երեսի վրայ թողնուած բանտի տպաւորութիւն էր թողնում: Սուլթը ախոռի մուտքի էր նմանում, իսկ տան առաջ միշտ պատրաստ կանգնած էին կառքեր և թամբած ձիաններ:

Մի խափշէի վերցրեց իմ այցեատմար և ինձ ճրաւիրեց դրան առաջին յարկի նախանինակը, որ վերին սատիկանի անձանելի, մերկ և ցուրտ էր և շատ ցածր առաստաղ ունէր:

Վերջապէս ինձ վերե հրաւիրեցին: Անողութներով լարձրանալիս ես մի ինչ որ անձանելի հոս զկացի: Ծնդունարանը աւելի տաք և հաճելի էր, այնունզ նոյնիսկ մի քանի հատ գրոգեր էին փուռած, որոնք բաւական զեղեցիկ զարդարում էին ըսղուարանը: Ինձ համար բերին սոլորական մոկայի սուրճը: Հազիւ էի ես խմել, երբ ինձ ճրաւիրեցին եպարքուի մօտ:

Մարդ հազիւ կարող էր հաւատալ, որ արտաքուստ զղուելի տպաւորութիւն թողնող այդ տան մէջ կարող էր վելորի կարլնէտի պէս մի զեղեցիկ, ընդարձակ, օղաշատ, լսադաշ և զբքերով զրեթէ լիքը սենեակ գտնել, որտեղից և հրաշալի տեսարան էր բացում դէպի ծովը:

Բայց չէ որ Նազիմ փաշան նշանաւոր բանաստեղծ, կը ը

թուած, ազատամիտ և ազնիւ գաղափարների տէր մի մարդ էր, որոնք վերջը նրան աւելի վնասեցին, քան օգուտ տուին:

Հայկական խոռվութիւնների ժամանակ, որոնք մի տարի յետոյ սկսուեցին մայրաքաղաքում, Նազիմ փաշան պատուէր ստացաւ հայերին կոտորելու: Երբ նա իր պարտականութիւնը կատարեց և հայկական յեղափոխութիւնը սրով վերջացրեց և մայրաքաղաքը ազատեց, ներկայացաւ Սուլթանին իր կազմած բարենորոգութիւնների մի ծրագրով, իր թէ ապագայութն էլ առաջ գալիք փանգների առաջն առնելու դրաւառութեամբ: Սուլթանն իսկոյն կարգաց նրա ձեռագիրը, գովեց և վարձատրեց նրան 500 ֆունտով և նշանթաշում, իլլիդ-Քիոսկի մօտ գտնուող մի կոնակով, ապարանքով:

Եւ յիրաւի, Սուլթանը ցանկանում էր Նազիմի կազմած բնֆորմների նախագիծը իրագործել, իսկ քաջ վեզիրը այսուհետեւ այլիս պէտք է ոչ թէ իրանից հետու՝ Ստամբուլի մի ողորմելի կոնակում ապրէր, այլ միշտ իր մօտ մի փառաւոր ու շըեղ պալատում:

Նազիմ փաշան իրան չափազանց երջանիկ զգալով գնաց տուն, երազում էր մեծ վեզիրութեան մասին և իրան արդէն մի երկրորդ Միհրատ փաշա էր համարում:

Նա հազիւ էր Սուլթանի մօտից հետացել, Երբ պալատում սկսեցին կամարիլլա խաղալ: Իզզէթ բէյլ այդ ժամանակ Սուլթանի ամենաառաջին սիրելին էր: Ոստիկանութեան մի մինիստը, որ իրան յանձնուած արիւնալի պատուէրը ճշտութեամբ կատարել էր, (Իզզէթը համարում է հայկական կոտորածների անմիջական ստեղծողը) նրա հետ սագեց: Ոստիկանութեան մի այնպիսի մինիստը, որ բարենորոգութիւններ էր ցանկանում և եւրոպական գաղափարների տէր մարդ էր, Սուլթանի հետ այլ ևս չէր յարմարուած:

Ի զէպ նազիմ փաշան արդէն իր հին կոնակն էր հասել՝ նա արդէն պատուէրներ էր տալիս նշանթաշ՝ մեծ պաշտօնեանների և Սուլթանի սիրելինների հպարտ թաղը անդափոխուելու, Երբ յանկարձ նրա մօտ եկաւ մի պալատական պաշտօնեայ, որ յայտնեց Նազիմ փաշային, որ Սուլթանը նրան պաշտօնանկ է արել:

Ուրեմն ընդամենը 24 ժամ էր անցել նշանթաշի կոնակը ընծայելուց յետոյ և Նազիմ փաշան ոչ թէ տեղափոխուեց այն կոնակը, այլ մենակ ու տիսուր ճանապարհ ընկաւ զէպի աքսոր, ամեն ինչից զրկուած և արհամարհուած:

Բայց նրա եռանդը և քաջ գաղափարները՝ թշնամինների վերաբերմամբ՝ յաղթանակը տարան. նա վարձաւ գոնէ եթէ ոչ

նորից մինիստը, բայց զլխաւոր նահանգապետ Դամասկոսում, և իրեւ Սուլթանի ամենաարժանաւոր ներկայացուցիչներից մէկը ընդունեց Վիլհելմ կայսրին:

Եթէ այսօր թիւրք ոստիկանութիւնը մասամբ կազմակերպուած է, այդ բանի համար նա զլխաւորապէս պարտական է հէնց վերոյիշեալ նազիմ փաշային, չնայելով որ եւրոպական հասկացողութեամբ այդ զեռ ևս բաւական վատ կազմակերպութիւն է: Կ. Պոլիսը նոււածող Մեհմետ Բ-ը ոստիկանական հետեւեալ կարգադրութիւն էր ստեղծել: Արա ամենագլուխոր շեֆը իստամբուլ աղասին կամ Ստամբուլի կոմմենդանտն էր: Նրանից յետոյ գալիս էր բոստանչի բաշին կամ թիկնապահ գնդի այն գեներալը, որ հսկում էր ջրանցքի և գրա մօտ գտնուող եւրոպական ու ասիական մասերի թաղերի վրայ: Բոստանչի բաշին մահու և կեանքի վրայ իշխանութիւն ունէր և ամեն ինչ շատ կարճ էր կտրում, օր. մեզաւորներին ծովլ էր ձգել տալիս. նա ապրում էր եալի-Քիօչկում և սովորաբար անցնում էր 7 զայգ թիակներով թիավարուող նաւակով:

Արհեստների և արհեստաւորների կազմած ընկերութիւններին վերաբերող օրէնքների գործադրութեան համար հոգում էր մուխթէսերը կամ չուկային գատաւորը: Նրան իրաւունք էր տրուած այդ սահմանում կատարուած պարտազանցութիւնները ամենայն խատութեամբ պատճելու, ի բաց առեալ մահուան պատիժը: Նրա նշանակած զլխաւոր պատիժները հետեւայն էր. ականջներ և քթեր կտրել, մարմնի զանազան մասերը ասեղով կամ ուրիշ գործիքներով ծակել և այն:

Այսպէս նայիրը հսկում էր ուսելեղէնների և նրանց գների ու քաշի վրայ: Նա էլ իրաւունք ունէր պատժելու:

Ազագրաշին, որ սովորաբար ենիշերինների զլխաւորն էր, հսկում էր բանտիրի վրայ: Ենիշերական մի ուրիշ սպայ գործում էր իրեւ ոստիկանութեան կոմիսար: Վերջապէս ոստիկանութեան զլխաւորի իրաւասութեան տակ էր գտնուում և միւմարբաշին կամ շնութիւնների վերանոկիչը, առանց որից իրաւունք ստանալու ոչ որ չէր կարող որեկ տուն շինել, ընդգարձակել կտու նորոգել: Այդ պաշտօնը ամենարդիւնաւէտն էր:

Ներկայումս, ի նկատի չունենալով քաղաքային թիկնապահները, որոնք էլի ոստիկանութեան հետ են կապուած, կ. Պոլուում կան երեք տեսակ ոստիկանութեան. զափթիւններ կամ ժամանակամիական ոստիկաններ, զինուորական և կէս ոստիկաններ:

Մի առանձին խումը են կազմում լրտեսները:

Զինուորական ոստիկանները կամ պոլիցիսանները, որոնք

մեծ ժառանգը ալլանացիներից են բազկացած, սովորաբար թիւքական զօրքի սպաների համարկեստ են հաղորդում և միայն նրանք են կրում իրանց սպառանոցի վրայ՝ կիսալուսնի նշանութեանը, ինչպէս որ աւտորիական կամ ուսուգարական ոստիկանները: Դրանք իրաւունք ունեն միմիայն դինուուրական անհատների վերաբերմբ:

Զափթիաները հպատակում են մեծ զափթիային կամ ուստիկանութեան նախարարին: Եւրաքանչիւր վիլայէթ ունի այդպիսի զափթիաների մի վաշտ, որ ամբողջովին մահմեղական ներից է բաղկացած: Միայն զրանց բարձրագործ աստիճանաւորները երբեմն զանազան քրիստոնեաց ազգութիւններից կամ բնիկ հրէաներից են ընտրում: Հայկական կոստրածներից յետոյ, եւրոպական դիպլոմատիայի պահմաննած բեկորներից մէկն էլայն էր, որ թիւքական ժանղարմերին պէտք է բաղկացած լինի թէ մահմեղականներից և թէ քրիստոնեաներից խաղն ընտրուած անհատներից: Թիւքքիան գէտը քերի ճնշման ազգեցութեան տակ խոստացաւ այդ պահման ջը կատարել, բայց գժրաղղաբար այդ բանը մինչև այսօր չիրազորդուեց:

Վերոյիշեալ զափթիաները ժողովում են նաև անաւանդ գտաւաներում ամենավատ արարածներից, կարելի է առել համարակութեան կղկղանքից և երեխ տուածնորդուում են այն հայ յեցակէտով, որ միայն աւազակները և մարդանպահներն են ամենայարմար կոտորդները մարդասպահների և աւազակների գէմ: Ոչ մի լու անհատ չէ կարող սոտիկանների այդ խորի մէջ մանել, օրէնքով սրա՞ ամեական մէկ ու կէս Փունտ պէտք է ստանան, բայց ամբողջ տարուայ ընթացքում հաղիւ երեք կամ չորս անողամ են ծշտութեամբ և կանոնաւոր կերպով իրանց խոստացուած ոստիկլը ստանում: Հետեազէս և այդ ոստիկլը ամսական կէս Փունտ պէտք է հաշուել, որ ինչպէս տեսնում էք զրաւիչ նիւթիական միջոց չէ: Գրահամար թիւքքիայում միայն ամենակածկածելի արարածներն են յանձն առնում այդ ամենատրխուր արհեստին նուիրելու: Այդ սոտիկանների վատ վարձատրութիւնը ու ծառայութեան աննախանձելի պայմանները պատճառ են դառնում, որ նրանք շարունակ խարերայութիւններով ու կեղեքումներով պարապեն: Նոյնիսկ մայրաբաղաքուն ծառայող սոտիկանութեան կոմիսարները վատ և անկարսոն վարձատրութիւն են ստանում: Նրանցից ունաք ինձ զանգաւում էին, որ իրանք 18 ամսից ի վեր վարչութիւնից գետ ոչ մի պիտօնոր չեն ստացել: Պարզ է, որ սուլթան՝ բախչանց նրանց համար աւելի սիրելի է քան Սուլթան Արդուլ Հա-

միլը: Իբա հետեւանքը այն է որ մի բանի պիտառով. նրանք
ամեն բան անում են: Նրանք հեշտութեամբ բանում են իրանց
ձեռքերը և փակում աչքերն ու ականջները:

Փող ունեցողը կարիք չէ զգում զափթիաներից ակնածե-
լու: Բայց վայը տարել է նրան՝ ով թոյլ է, այսինքն փող չու-
նի և ընկնում է նրանց ձեռքը: Այն ժամանակ արի և առա-
զափթիաների բարբարոսութիւնը, որ իր տեսակի մէջ տռած է
դարձել:

Նրանց նպատակը միմիայն փող կորզելն է: Փողոցին ան-
կարգութիւնների ժամանակ նրանք անյայտանում են, նամա-
նաւանդ երբ թուով քիչ են լինում: Երեակայեցէք մէկից որևէ բան
են զողացել և այդ մարդը դիմում է ոստիկանութեան օգնու-
թեան: Բացի ծաղրից և որո՞վ վնասներից ոստիկանութիւնը այդ
մարդուն ոչինչ չէ տալիս: Յափշտակուած մարդը ամենից տ-
ռաջ ոստիկաններին ծախսերի համար փող պէտք է տայ:

Պէտք է ասել, որ թիւրբական ոստիկանութեանը երբեմն
յաջուռում է գանել գողացուած իրը, բայց նա այդ բանը կամ
պահում է իր համար, կամ թէ չէ կիսում է զողի հետ: Վհա-
սուած մարդը ոչ մի դէմքում իր զողացուած առարկայի երե-
սը չէ տեսնում:

Մայրաքաղաքում զափթիաները գեռ մի քիչ լաւ են հագն-
ուում, նամանաւանդ տօներին, երբ այնակ ժամանած են լի-
նում բարձրափոյն հիւրեր: Այդպիսի դէպքերում ձիւառը ժան-
դարմաններին կամ ոստիկանութեան բարձր պաշտօնեաններին շատ
անգամ պատահում էք սպիտակ ձեռնոցներով:

Այդ երեսոյթի ամբողջ պատիւն պատկանում է ոստիկա-
նութեան նախկին տեսուչ պարոն Բռնէնին, ծագումով Գրան-
պիացի: Հայկական կոտորածների ժամանակ վերոյիշեալ վը-
րանսիացու կատարած գերը ամբողջ աշխարհի զողուանքը այն
աստիճան շարժեց, որ եւրոպական մեծ պետութիւնների ցան-
կութեամբ պաշտօնից զրկեցին և հայրենիք ուղարկեցին մի մար-
դու, որը Թիւրքիա էր կանչուել յատկապէս ոստիկանական
կազմը բարեկարգելու: Յարանսիա վերադասնալիս նա իր հետ
այնպիսի խոշոր հարստութիւն տարաւ, որ մինչև ծերանալը
նրան նոյնիսկ ջրի վրայ կարող էր պահել:

Նրա յաջորդ և փուլն, որ Պարիզում երբեմն, թիկնաշ-
պահ խմբի պարագաւին էր, չնայելով որ Մօսիօ Բռնէնի
պաշտօնագուրկ լինելու օրից իվեր իր զործունէութեան
շրջանում մի քանի օգաւաէտ բաներ է կատարել, բայց այ-
նուամենայնիւ նրան գեռ մինչև ալսօր էլ չէ լաջողուել բոլոր

ինտրիկների առաջն առնել և իր հախամտածած ըեփորմները իրագործել:

Եթէ մայրաքաղաքում իրերի գրութիւնը այդպէս է, մի՞թէ դեռ ևս կարիք կայ ասելու, թէ գաւառներում ինչպէս անմիտիթար են ոստիկանական պայմանները: Դեռ մի քիչ տաճելի են այն գեղեցիկ պայմանները, ուր հասնում են երկաթուղու գծերը: Բայց Թիւրքիայի ներքին գաւառներում, որտեղից գետանների ականջին ոչինչ չէ հասնում, որքան էլ նրանց լողութիւնը զարգացած լինի, այն ժամանակ երեակայեցէք, ընթերցնեած իսկական գործունէութիւնը այն ապականուած և յուսահատուած աւազակների, որ ընդհատ խօսքով թիւրքական ոստիկանութիւն է կոչուում:

Յուղկահարներից էլ աւելի թշուառ են պատառուած հաւգուստների մէջ կորած այդ մարդիկը, որոնց ես շատ անգամ տեսել եմ նոյնիսկ առանց կօշիկների: Ռայաները՝ Թիւրքիայի քրիստոնեանները այդ կեղեքութիւններից ի հարկէ աւելի չեն տուժում քան թէ մահմեղականները, որոնք առանց այն էլ անմիտիթար վիճակի մէջ են գտնուում:

Խափիէն իր արհեստը բանեցնելու ժամանակ հաւատի և միջոցների խորութիւն չի դնում: Մահմեղականի տունը նա խարգախութեամբ մտցնում է կեղծ փող, հարուստ հայի տունը ուումբեր, և զրանց փոխարէն մահմեղականը նրան տալիս է իսկական արծաթ, իսկ գետաւուրը իսկական ուկի:

Կէս ոստիկանութիւնը բաղկացած է ըեկչներից կամ գիշերապահներից և թուլումբաշներից կամ մայրենի հրդեհաշեջներից: Դրանց ամեն մի խումբը մայրաքաղաքում բաղկացած է մի քանի հազար մարդկանցից:

Բեկչին կամ գիշերապահնը ծառայում է արեգակի մայր մանելուց մինչև ծագելը: Ծանր և երկաթապատ գաւազանը ձեռքին նա անդադար չափչփում է իրան հսկողութեան յանձնուած փողոցը և գաւազանով շարունակ զարկում է քարին: Նա զրանով թէ խանգարում է գիշերային խաղաղութիւնը և թէ գրուշացնում է անկարգութիւն անելուց: Պէտք է աշխատել նրանետ լաւ յարաբերութիւն պահպանել, այսինքն կանոնաւոր կերպով տալ նրան բախչից, որ կազմում է նրա ամրող վարձատրութիւնը, այն ժամանակ միայն ապահով է մարզու: Ով նրան կանոնաւոր կերպով վճարում է, բէկչին էլ նրան է պաշտպանու: Պաշտպանել բէկչիի գործն է, ցանկացած գէպքում գողերի հետ նա ամեն իսչ իսպաղ կերպով է վերջացնուում: Գիշերապահնի ամենալաւ ելամուտը մանուկներ գողանալուց է առաջնուում:

Երբ ծնողների մօտից որևէ երեխայ է անյայտանուում, նըրանք իսկոյն կանչում են գիշերապահնու: Բաւական է ծնողները նրան որևէ գումար խոստացան, այն ժամանակ երեխան իսկոյն երեխան է գալիս:

Գիշեր ժամանակ հրդեհն պատահած դէպքում գիշերապահը սարսափելի ձայնով գուսում և յայտարարում է հրդեհի տեղը, եթէ դա իրանից նոյնիսկ մի քանի ժամ հեռաւորութեան վրայ գտնուի: Հոգ չէ, այդ բանը նրա ձանձրալի արհեստի տեսակէտից մի տեսակ հաճելի փոփոխութիւն է:

Թուլումբաշները կամ հրդեհաշեջները նոյնարկուած են ամրող քաղաքում: Դրանք սովորաբար բաղկացած են բենակիր համալիներից և քայքչներից կամ նաւավարներից: Դըրանք մեծ մասամբ վիթխարի են և փիզիքական արտասովոր ոյժով: Որովհետեւ կ. Պոլսի փողոցները առհասարակ անկանոն ու խորութրոգ են, և բենակիր կառերը ամեն տեղով չեն կարող անցնել, դրա համար էլ համալիները ամեն ինչ կրում են իրանց ուսերի և մէջը վրա: Մարդ յաճախ պատրահում է այնպիսի մշակի, որ իր մէջը մեծ գաշնամուր կամ մի քանի փթանոց բեռներ զրած փողոցներով այս ու այն կողմն է առանում: Ամենածանր ապրանքն անգամ նրանց համար գնդակի նման թեթև է: Այդ արտօնութիւնը վաղուց ի վեր համալիներին է պատկանում: Բաղարի գրեթէ բոլոր մասերումն էլ համալիները իրանց յատուկ ժողովատեղին ունեն:

Բայքչները կամ նաւավարները իրանց մենաշնորհն ունեն: Թէ համալիները և թէ քայքչները պարտաւոր են հրդեհների ժամանակ իրրեկ կամաւոր հրդեհաշեջներ հարկաւոր տեղերում իսկոյն երեալու: Նրանք նրաշալի կերպով վազել գիտեն, դրա համար էլ նրանք սուարորիկ և կիսամերկ իսկոյն համանում են վասնգաւոր տեղերը: Դժբաղգարար գրանք էլ մայրաքարի համար վնասակար ու սարսափելի են, որովհետեւ աշխատում են աւելի շուտ գողանալ բան թէ հրդեհը հանգըրնել: Հէնց այդ գիտաւոր պատճառը, որ շատ մարդիկ իրանց ունեցած չունեցածը աւելի շուտ մատնում են հրդեհնին, բան թէ թոյլ են տալիս այդ վայրենի բարբարուներին իրանց տունը մըտնելու: Զինուորական հրդեհաշեջների պահակախումբը սրանից մօտ 30 տարի առաջ կաղմակերպել է վրաֆ Զիշենի վրաշան և մինչեւ այսօր էլ նա է կառավարում: Վերոյիշեալ վրաշայի շնորհիւ մի անգամ ընդմշտած կարգադրուած է, որ երբ ինքը հասնում է հրդեհուած տեղը, այդ վայրենի թուլումբաշները պէտք է իսկոյն հեռանան, բայց չնայելով այդ հանգամանքին, յաճախ երկու կուսակցութիւնների մէջ առաջ են գալիս սաս-

արկ ընդարումներ, նոյնիմկամիւնահեղ կոփւներ, որոնց հետանքը լինում է այն, որ երբեմն սպանում կամ վիրաւորում են բաւական մարդիկ միւնոյն տեղում:

Գիշերապահները և թուլումքաշները ժողովրդական խռովութիւնների ժամանակ էլ ոստիկանութեան օգնականերն են հանդիսանում: Հայկական կոտորածների ժամանակ ամենաաշնուանարկուած մարդիկը հէնց այդ թուլումքաշներն էին: Բեկշիներն առաջնորդներ էին հանդիսանում, որովհետեւ նրանք իրեն գիշերապահներ ճանաչում են իւրաքանչիւր տան, գրեթէ բոլոր անդամներին: Հէնց գրա համար էլ հայերը գրանց շնորհւ բաւական փասներ կրեցին, որովհետեւ ամենից շատ տուժողը արդարութիւնը հղաւ...

Թիւրքական ներկայ վարչութեան մէջ բացակայում է ամենակարենոր տարրերից մէկը՝ գիտցիսլինան:

Ուղիղ ճանապարհը կամ շիտակութիւնը ամենահազուեակաւտ բանն է: Գրեթէ ամեն մարդ մոռանում է իր մեծաւորի անձնաւորութիւնը և իր ստացած տեղեկութիւնները լրտեսութեան գաղտնի ճանապարհով անմիջապէս հասցնում է Մէրային:

Փոխադարձ վատահութիւն ասած բանը Թիւրքիայում գոյութիւն չունի: Այստեղ մարդ ունի թշնամիներ, լրտեսներ, բայց աշխատակիցներ, ամենին:

Անսախանձելի են ներկայ պայմանները և Բ. Դուանը: Սուլթանին հաճոյանալու համար ամենաբարձր պաշտօննաները միմիանց վերաբերմամբ տածած նախանձից և ատելութիւնից զրդուած շարունակ լրտեսում և բաժրատում են իրար: Այստեղ եռում է յաւիտենական կոփւը մեծ վեղիրների և վեղիրների մէջ, այնտեղ կուռում են փաշանները փաշանների, էֆէնդինները էֆէնդինների զէմ, և նոյնիսկ Բ. Դուան զանազան սենեակների և բաժանմունքների կապուչինները կամ գոնապանները միմիանց զէմ: Այստեղ է կատարուում եսասիրական ցանկութիւնների տրագիւկոմեդիան, որի բաղդախնդիր հերոսները միմիանց զէմ ինտրիգաներ սարքող արարածներ են:

Գրեթէ ամեն ժամանակ և ամեն երկրում լրտեսներ են եղել: Նրանք աշխարհից երբէք չպէտք է վերագոյն ժամանակում մենք դրանց սխրագործութիւններին պատահ ենք ենք նոյնիսկ աղատութեան և քաղաքակրթութեան երկիր ֆրանսիայում, ուր մի գատաւոր միւսին լրտեսում և աժքաստանում էր:

Բայց միմիայն ժամանակակից թիւրքին է պատկանում լըրտեսութեան արհեստի մէջ ամենափայլուն դափնին:

Ոստիկանական կազմակերպութեան ամենանշանաւոր մասը կազմում է «իսամիկելիքը», կամ պատմի լրտեսութիւնը: Այդ մասն է որ ունի ամենաշատ անդամները:

Իլլըզ-Քիոսկի գաղտնի ծախսերի վերջին ցուցակում «Սուլթանի ապահովութեան» վրայ հսկող 43,000 լրտեսների համար նշանակուած է, մի բանի միլիոնի համար պատկառելի մի գումար: Այդքան լրտեսներից 3000-ը միայն իլլըզ-Քիոսկի համար են գործում, իսկ մնացած 40,000-ը ցրուած են ամերող տէրութիւնն մէջ:

Այդ մարդկանց պարտականութիւնն է հսկել մինիստրուների, զինուորաների շէյխների, սովորակաների, մասնաւոր մարդկանց և օտարազգինների վրայ մեքենայութիւններ հնարել, դաւադրութիւններ երևան հանել, մէկը միւսի դէմ զինել, դեսպանատներից լուրեր թերել կամ նրանց աեղեկութիւններ հաղորդել: Իրանց լրտեսութեան են նուիրում ոչ միայն թիւրքերը, այլ և յոնները նամանաւանդ հայերը, եւրոպական գրեթէ բոլոր ազգութիւններին պատկանող շատ մարդիկ, որոնք պատկանուում են գրեթէ բոլոր զասակարգերին, իսկ գերմանական տարրի արեելը զօրմնալու օրից իւվերնայնպէս և շատ գերմանացիներ, մնած մասամբ իհարկե, ուղնեգագաներ: Դրանցից շատերին իսկոյն կարելի է ճանաչել, թէկ նրանց մնած մասը աշխատուում է գործում է մութ խաւերում:

Ծառան մատնում է իր տիրաչը, սրդին հօրեւ աէրը ծախում է իր ծառանարին, իսկ հայրը սրդիներին:

Սուլթանի ամենասիծ սիրելիներից մէկը՝ Իզզէթ բէյը, որ կրկար ժամանակ փոխուութանի զիր էր կատարում, և կրգը բում ամենասովորական լրտեսներից մէկն էր: Լրտեսների վըրայ էլ հակալրտեսներ են նշանակուած: Ոստիկանական այդ խումբը թէ մայրաքաղաքում և թէ տէրութիւնն միւս մասերում ամենանշանաւորն է, իսկ նրա գործունէութիւնը ամենաշահաւետը: Լրտեսութիւնը հեշտ բան է, իսկ նրա համար տրուած վարժատրութիւնը ապահով ու կանանաւոր: Դրեթէ ամեն մարդ կարող է լրտես դանաւալ, բաւական է մէկը այդ պաշտոնի համար ցանկութիւն յայնից նրան ուրախութեամբ կընդունին:

Արևելեան լրտեսութիւնը յիշատակուում է իսլամի գոյութեան նոյնիսկ ամենահին ժամանակներում:

Առաջին մարդը, որ արաբացիների մէջ, նրանց ժամանակակիրների ասելով, «գիշերային շըջագայութիւն» էր անում, Արգուլահ իրն Մասուդն էր, որին Արուբէկիր խալիֆան պատուիրել էր Մէզիների բնակիչների վրայ հսկել:

Նրա մասին Արու Դառնդը պատմում է հետևեալը: Մի օր մի մարդ եկաւ Արգուլահ իրն Մասուղի մօտ և իր հարհանին ամբատանեց հետեւալ խօսքերով. «Ճես, այստեղ մեզ մօտ՝ Մէդինէյում, վալիդ բէն Ակարա անունով մի մարդ է ապրում, որի միրուքից գինի է կաթում», բայց Արգուլահ իրն Մասուղը նրան պատասխանեց. «Հրտեսելը մեղ արգելուած է, միայն այն դէպում մենք կարող ենք մէկին պատճել, երբ մեր ոնպահական աչքերով տեսնում ենք, որ այդ մարդը օրէնքի հակառակ որևէ մեղք է գործում»:

Արարական Օմար իրն Ալխատտար խալիֆայի մասին պատմում են, որ նա իր նախկին ստրուկ Ասլամի ուղեկցութեամբ միշտ սովոր էր գիշերային շրջագայութիւններ անելու:

Արարական հարստութեան ժամանակ արարական տէրութեան մէջ Սահիբ-Ռւշ-Շորտա անունով մի առանձին պաշտօնեայ գոյութիւն ունէր, որի պարտականութիւնն էր քաղաքների բնակիչների ապահովութեան վրայ հսկել, և դրա պաշտօնակարարը գիշերները շարունակ թափառում էր փողոցներում: Իրն Խալտունը այդ պաշտօնեայի գործունէութեան մասին հետեւալ մանրամանութիւններն է պատմում:

Աֆրիկայում նրան անուանում են Հաքիմ, Անգալուղիֆայում Սահիբ-Էլ-Մէդինա, քաղաքի տէր, քաղաքի վարպետ, ոստիկանապետ, իսկ թիւրքերի կամ մամեկուկների մօտ՝ վալի: Այդ պաշտօնեայի հեղինակութիւնը մի քանի դէպքերում տարածում է նոյնիսկ իր միապետի վրայ: Նրա պարտականութիւնն է ոճաբործութեան առաջն առնելու և ուղաւորներին պատժել, եթէ ակնյայտնի է նրանց գործած ոճիրը, որովհետ առտուածային օրէնքը ճանաչում է ոչ թէ կասկածելի, այլ բոլորովին հաստատուած ոճիրը:

Բայց գժբաղդարար շուտով փոխուեց այդ գեղեցիկ կարծիքը: Վերոյիշեալ պաշտօնեան, որ սկզբում իր անձնաւորութեան մէջ մարմնացնում էր արդարադատութիւնը, շեղուեց իր նպատակից և իրան բոլորովին նուիրեց լրտեսութեան: Այդ ժամանակից ի վեր գրեթէ իւրաքանչիւր քաղաքում Սահիբ Ալբարի անունով մի մարդ կար, որի պարտականութիւնն էր խալիֆային գաղտնի կերպով տեղեկութիւններ տալ այն բոլոր բաների մասին, որոնք կատարում էին քաղաքում, նրա շըրջակայքում, պաշտօնեաների ու ազգաբնակութեան մէջ:

Սակայն Ալկազիր Բիլլահ Ահմեդ խալիֆան հալածում էր լրտեսներին: Հոչակաւոր Ասոաֆեղդինը նրա մասին հետեւան է պատմում:

Մի անգամ վերոյիշեալ խալիֆան զբօնում էր Բաղդադի:

շուկայում: Այդ ժամանակ նա լսեց մի մարդու իր ուղեկցին ուղղած հետեւալ խօսքերը. «Այս զարշելի Ալկազիր կառավարութիւնը մեղ համար շատ երկար է տևում: Նրա կառավարութեան օրով առ հասարակ ոչ ոք չգիտէ, թէ ինչնի պէտք է ապրի»:

Խալիֆան այդ մարդուն կանչել տուեց իր մօտ և նրան հարցը իր զբաղմունքի մասին:

Մարդը պատասխանեց:

Ես պատկանում եմ այն զբարբուածներին, որոնց գործերը քննելու համար լրտեսներ են նշանակուած. և որովհետեւ այդ մարդը չգիտէր, որ ինքը կանգնած էր խալիֆայի առաջ, շարունակեց հետեւալը. բայց ներկայ խալիֆայի կառավարութեան օրով մեր զբութիւնը շատ վատ է. նա մեղ արդէն իմացնել է տուել, որ ինքը կարիք չէ զգում, զբանով մեր գոյութիւնը վտանգուած, իսկ մեր արհեստի հեղինակութիւնը ընկած է:

Դրանից յետոյ խալիֆան հարցը եց.

— Ճանաչում ես դու Բաղդադում գտնուող այն բոլոր մարդկանց, որոնք քո արհեստով են պարապում:

— Այն, պատասխանեց լրտեսը:

Խալիֆան հրամայեց թուել գրանց բոլորի անունները և իր գրագրին պատուիրեց գրելու:

Դրանից յետոյ ամբողջ Բաղդադի բոլոր լրտեսները բերին խալիֆայի մօտ: Վերջինս նրանց բոլորին էլ բաւականաշափ փող ընծայեց, բայց և այնուամենայնիւ նրանց աքսորեց դէպի իր տէրութեան ամենահեռակ սահմանները: Այնտեղի երկրներում նրանք նշանակուեցին իրք «լրտեսներ տէրունական կրօնի թշնամինների վրայ»:

Խալիֆան այս բոլորը անելուց յետոյ, դարձաւ իրան շըրջապատող մարդկանց և ասաց.

— «Տեսնում էք, որանք այն մարդիկն են, որոնց Աստուած ստեղծել է աշխարհում չարիքներ սերմանելու: Նրանց սիրու լցուած է ատելութեամբ դէպի իրանց ընկերները, նըրանց համար անհնարին է չարիքներից խուսափել և հէնց գրա համար էլ աւելի լաւ է, որ այդպիսի մարդկանց գործունէութիւնը ուղղուած լինի դէպի կրօնի թշնամինները, բան դէպի հաւատացեալները:

Հարուն-ալ-Ռաշիդի կեանքից այդպիսի դէպեր շատ և պատմում:

Հազար եւ մէկ զիշերների պատմութեան մէջ էլ կան ոյնանման ակնարկներ լրտեսութեան մասին:



Ես ցանկանում եմ այստեղ պատմել և մի անեկդոտ Հարիմ Բիսմիլլահ խալիֆայի մասին, որ հէնց ինքը լրտես էր և գիշեր ու ցերեկ շարունակ պատռում էր փողոցներում, որպէս զի չարագործներին բռնի:

Նա կանանց արգելել էր աներից դուրս գնալ: Մի անգամ նա փողոցում պատահեց մի կնոջ, որը չէր յարգել իր պատուերը: Նա այդ կնոջը յանձնեց իրան միշտ ուղեկցող դահճին, որը նրան տեղն ու տեղը սպանեց:

Եթէ այդ խալիֆան պատահում էր այսպիսի մարդկանց, որոնք իր պատուէրներից մէկն ու մէկը չէին կատարում, այն ժամանակ նա դրանց սովորաբար յանձնում էր իր ու ստրուկ Մասուդին, որ նրանց բարբարոսաբար անդամալոյն էր դարձնում:

Վերոյիշեալ խալիֆան մի անգամ հրատարակեց մի օրէնք, որի շնորհիւ գիշերը ցերեկ դարձաւ, իսկ ցերեկը գիշեր:

Այդ օրէնքի հիման վրայ բոլոր գործերը, ամբողջ առևտուրը և հասարակական ու մասնաւոր աշխատանքները պէտք է գիշերը կատարուէին, իսկ ցերեկը կատարեալ խաղաղութիւն պէտք է տիրէր ամենուրեք:

Սակայն նա մի անգամ պատահեց մի կաշեգործի, որ ցերեկով աշխատում էր:

Նա հրամայեց կաշեգործին կալանաւորել և ասաց նրան հետևեալը:

— Զէ որ ես ձեզ արգելեցի ցերեկով աշխատելը:

Բայց գժբախտը նրան կարուկ կերպով պատասխանեց: ծիշտ է, Զերդ Մեծութիւն: Բայց առաջ երբ մենք գործում էինք ցերեկը և այդքան ժամանակամիջոցը մեղ բաւական չէր ապրուստի անհրաժեշտ պիտոյքները ձեռք բերելու, մեր նպատակին հասնելու համար ստիպուած էինք գիշերուայժամանակից էլ մի քիչ գողանալ: Եւ այժմ արածս էլ միայն ցերեկուայ ժամանակից գողացածն է:

Այդ խօսքերի վրայ ծիծաղեց Հարիմը, նրան ազատութիւն շնորհեց և խկոյն պատուիրեց հին կարգերը վերականդնել:

Օսմանական տիրապետութիւնը լրտեսութիւնը արգէն նախապարաստուած գտաւ այն բոլոր երկրներում, որոնք իր իշխանութեանը ենթարկուեցան: Բայց նա այդ լրտեսութեան վրայ դրաւ իր առանձնայատուկ դրոշմը, այնպէս որ այսօր ամբողջ արևելքի յատուկ թիւրբական լրտեսութիւն անուան տակ պէտք է հասկանալ սուլթանական բնորոշ լրտեսութիւնը,

որի նպատակն է փոխադարձաբար միմեանց վրայ հսկել և խուզարկել և այդպիսի միջոցներով պահպանել իրանց կեանքը գոյութեան կռուին կուլ չգնալու համար:

Լրտեսութիւնը կազմում է պալատական բարձր պաշտօնեաների և տէրութեան ղեկավարների կեանքի էլեմենտը, նըրանց ոյժի հիմքը և նրանց ազդեցութեան մշտական զէնքը: Իսկ այն երեսոյթը որ թիւրբիայում լրտեսութեան համար այդքան շատ կամազուրկ գործիքներ են գտնուում, զրա պատճառը արդէն ներվազուրկ թիւրք ժողովրդի բնաւորութեան մէջ պէտք է փնտռել:

Ժամանակակից թիւրքերը շատ են արամադիր թուլութեան: Բնութիւնը, որ նրանց ծանրաբեռներ է բացասական այդպիսի յատկութիւններով, միջոցներ էլ է տուել այդ յատկութիւնները խնամելու: Թիւրքերի երկրի արեգակը այրում է երկար և ջերմ, իսկ երկրի հողը կարելի է քիչ ցանել և առան հունձ ստանալ:

Իրանց փառաւոր, աշխարհակալ և ծոյլ նախնիքներից թիւրքերը այժմ պահպանել միայն հրամայող յատկութիւն՝ հըպատակ ազգերի ռայաների վերաբերմամբ:

Մահմետականը մղում էր պատերազմներ, և իր օտարազդի հպատակներին էր թողնում հողագործութեամբ և առեսրով պարապելլ: Եւ երբ նա պատերազմից տուն էր վերազանուում ուայսն պէտք է յագեցնէր նրա սովածութիւնը, նա պէտք է հարկեր վճարէր, որպէսզի թիւրքը խաղաղ և ամեն յարմարութիւններով ապրէր:

Միկարարիզմը օսմանական տէրութեան մէջ միշտ այնպէս աւանդական է եղել և այժմս էլ է, որ բոլոր մահմեդականների չորս հինգերորդը զինուորներ են զառնուում: Շատ քիչ մարդիկ են առեսրով, հողագործութեամբ և զիտութեամբ պարապւում: Ուրովհետև ով զինուոր չէ կամ չէ կարող էլ լինել, զառնում է պաշտօնեայ կամ ծառայ, շատ հազուագիւտ զէպքերում միայն գիւղացի:

Թէ զինուորական ծառայութեան և թէ պաշտօնեաների գառակարգում պլոտեկցիան ամեն ինչ կատարում է:

Թիւրքիայի արտօնեալ գասակարգերն էլ քիչ են, ինչպէս և աղնուականները: Մարդկանց տաղանդը, մտաւոր պատրաստութիւնը և բնուորութիւնն էլ նշանակութիւն չունին:

Ամենավերջին զինուորը կարող է զառնալ մարշալ, այսինքն գիւղաց: Ամենավերջին համալը կամ բեռնակիրը կարող է միծ վեղիրի սատրազամի պաշտօնին հասնել:

Թէ մէկը և թէ միւսը ուրիշ ոչ մի բանի կարիք չունեն,

բացի պլոտեկցիայից. վերջինիս չնորհիւ կարելի է ամեն բան ձեռք բերել: Նոյնիսկ գրելը և կարդալը պարտադիր չէ որևէ մարշալի կամ մեծ վեղիրի համար, չը որ գրող և կարդացող մարդիկ կարելի է վարձել, բաւական է միայն, որ մարդ կարողանայ իր սեպհական կնիքը դրոշմել պաշտօնական թղթերի վրայ:

Ամբողջ զօրը և բոլոր պաշտօնեաները դրա համար էլ բաղկացած են թեկնածուներից և սիրելիներից:

Որևէ պաշտօնի հասած մարդն էլ իր շուրջն է ժողովում իր ազգականներին, ընկերներին, ծառաներին և նրանց, որոնք իրան հաճոյը են պատճառում: Վերջիններս էլ փոխազարձաբար պաշտպանում և հովանաւորում են միմիայն իրանց մարդկանց:

Բայց իրանց գոյութիւնը պահպանելու համար այդ մարդիկ շարունակ կասկածում են միմեանց վերաբերմամբ, զիտում և հսկում են միմեանց գործերը, իսկ այդ նպատակին համելու համար, միմեանց վրայ լրտեսներ են նշանակում:

Մէկը լրտեսում է միւսին:

Ամենից շատ լրտեսներ Սուլթանը ունի, իր բոլոր պաշտօնեաների, մեծ մուֆթիի, մեծ ներքինու, մեծ վեղիրի, ամենավերջին բէյի և էֆէնդիի, իշխանների, իշխանուհիների, նրանց տների և ամբողջ ժողովրդի վրայ հսկելու համար:

Մինիստրութեան անդամներից մէկի պարտականութիւնն է իր ընկերների կարծիքները ամեն օր մի քանի անգամ Սուլթանին հաղորդելու, բայց այդ խելօքը գաղափար չունի, որ իր մասին էլ օրեկան միքանի անգամ միապետին տեղեկութիւններ են հաղորդում:

Իւրաքանչիւր փաշա ունի իր լրտեսները, իւրաքանչիւր լրտես էլ իրը:

Շատերն են սիրով լրտեսութեան նուիրուս, որովհետեւ իրանց կարծիքով այդ պաշտօնի հետ ոչ մի խայտառակութիւն կամ ամօթ չէ կապուած:

Այդ մութ պատուաւոր մարդկանց կարելի է ամեն տեղ, ամեն դասակարգի մէջ և ամեն հիւրանոցներում պատահել: Մարդ նրանց զիխաւորներին ճանաչում և նրանց հետ յարաբերութիւն ունի: Նրանք միմիանց փոխազարձաբար շահագործում են: Լրտեսները ամենամեծ հեշտութեամբ են թէ փող և թէ պաշտօններ ձեռք բերում: Դրանց գաղտնի ծառայութիւնը միացած պաշտօնականի հետ, աւելի յարմար տանելի է և մէկին միւսների աջում չէ վնասում, ընդհակառակն ամեն մէկին

մի տեսակ գաղտնալից և կարելոր զիրք, մի տեսակ աներեւյթ ազգեցութեան թովչութիւն է շնորհում:

Ահա այս է թիւրքական լրտեսութեան հոգեբանութիւնը կարձ խօսքով: Վերոյիշեալ փատերը կարծեմ բաւական պարզ ցոյց տուին այդ լրտեսութեան զարգացման պատմութիւնը, նրա ոյժի և ծաւալման հիմքը:

Մօտ մի քառորդ դար առաջ օսմանեան տէրութեան համար կարծես սկսուեց միսիթարական մի շրջան, որ պէտք է այդ տէրութիւնը պատէր ամեն տեսակ չարիքներից:

Այդ շրջանում ամենաանհաւանականը նոյնիսկ հաւանական էր թւում. Թիւրքիան ցանկանում էր կերպարանափոխուել: Ընդհանուր կրթութեան մէջ յառաջադիմութեան մի տեսակ տրամադրութիւն էր նկատուում: Սկսեցին նոր տանել նոյնիսկ գիւղատնտեսութեան վրայ:

Սկսուեց նոյնիսկ մամուլի ազատութիւնը, որ մերկազնում էր թիւրքական վարչութեան բացասական կողմերը, և մտակում զօրքի և տէրունական պաշտօնեաների կամայականութիւնները: Այդ մամուլը ժողովրդին բացատրում էր իր պարտականութիւնները և իրաւունքները և շշուում էր կառավարութեան իրաւունքների ու պարտականութիւնների վրայ:

Եւ երբ ժողովուրդը մի օր տեսաւ, որ Աբդուլ-Ազիզը տէրութեան հարգատութիւնները վատնում և ժողովրդի ոյժերը ջլատում է, այն ժամանակ գահընկէց արաւ նրան ազատութեան հերոս Միդհատ փաշայի շնորհիւ:

Սուլթան գարձաւ Մուրադ Ե.:

Վերջինս մի ազատամիա և հասկացող մարդ էր: Նրա կառավարութեան օրով վերացաւ լրտեսութիւնը: Լրտես անունը նրա ժամանակ նոյնիսկ ամենաստոր մարդու համար մահացու կերպով վերաւորող նշանակութիւն ունէր:

Դա մի հիանալի ժամանակ, մի տեսակ լրւաւոր շրջան էր, որ տեսեց միայն 93 օր:

Իսկ յետո՞յ:

Լրտեսութիւնը անյայտացել և նոր ոյժեր էր ժողովում, որպէսզի տէկի մեծ թափով կրկին երևան գար:

Աբդուլ Համիդը հրատարակեց սահմանադրութիւն և մի քանի օրից աքսորուեց այդ սահմանադրութեան հեղինակ Միդհատ փաշան:

Սուլթանի արքունիքը այժմ աւելի շատ քան երբեկցէ ինտրիկաների ասպարէզ գարձաւ: Սուլթանին շրջապատող մարդկի այժմ լրտեսների շնորհիւ զանազան դաւագրութիւններ էին սարքում, որպէսզի իրանց ոյժը և նշանակութիւնը բար-



ձրացնեն: Իսկ նաև խալիքան, Թիւրքիայի միահեծան աէրը ընկնում է նրանց ազգեցութեան տակ և բնաբարում ու ճընշւում է աւելի բարբարոսաբար, քան թէ Թիւրքիայի ամենահեռաւոր գաւառում ապրող ստրուկ ույախ:

Իսկապէս ժողովրդի մտքով դեռ ևս չէ անցնում գաւադը բութեան գաղափարը: Նա դեռ ևս շատ բարի և ծոյլ է իր վրայ ծանրացող անտանելի լծի վերջնական թօթափման մասին մտածելու համար: Բայց դեռ որքան պէտք է տեի, մինչև որ ժողովրդի բնական գաւադը թիւնը յաջորդի: արուեստական ճանապարհով ստեղծած գաւադը թիւներին:

Արդուլ-Համերը թողել է Դոլմաբաղչէի պալատը, որովհետեւ նա այնտեղ էլ այնքան շատ չէր չէղորացած ապրում, և սպանուած Արդուլ-Աղիզի ստուերը ու հոգեկան հիւանդ Մուշդի հոգին նրան այնտեղից հալածում էին:

Նա իր համար շինել տուեց Իլլըզ-Քիոսկի ամրոցը, որով հետեւ այնտեղից նրա համար լայն հորիզոն էր բացւում: Մյու ամրոցը նա շրջապատեց եռապատ պարիսպներով և դրա պահպանութեան համար նշանակեց 15,000 զինուորներ, որոնք անդադար ընծաներ ստանալով նուիրուած են իր անձի պահպանութեանը:

Սուլթանը իրան շրջապատել է չինական պարսպով, որպէսզի ժողովուրդը իրան փառարանի, երբ նա մի անգամ քաջութիւն է ստանում այնտեղից դուրս գնալու: Բայց գժրադադար լրտեսները նրան հաղորդում են, որ հպատակ ժողովուրդը միայն յեղափոխութեան և Սուլթանին սպանելու մասին է մտածում: Հէնց գրա համար էլ նա աւելի և աւելի է վախճանում, աւելի առուր է փակւում իր ամրոցում և նոյնիսկ չէ համարձակւում, երբ նա տարեկան մի անգամ պէտք է թողնի իր բանտը և գնայ Ստամբուլ մարգարէի վերարկուն համբուրելու, ցամաքային ճանապարհ ընտրելու, այլ զաղացազողի կերպով շոգենաւով է այնտեղ գնում, այն ինչ ամբողջ ժողովին, հարիւրաւոր ճախապատրաստութիւններ տեսներով, հրապուրում են դէպի կամուրջը...

Երկայում պալատական լրտեսութեան ամենագլխաւոր ներկայացուցիչները համարում են հետեւալ անձնաւորութիւնները: Ահմեդ Զէլալէդդին փաշան, Թահիր փաշան, Կաղրի, Մահմեդ Ռուսի և Նազիր բէյերը:

Ալբանացի կանի բէյը, որ նոյնպէս մեծ դեր է կատարել և իր Փիղիքական ոյժի համար ընտրուել էր Սուլթանի պահպանութեան հսկելու քնած ժամանակ, իր ստոխներից մէկի ձեռքով սպանուեց: Զէ որ Թիւրքիայում շատ բնական է և այն

որ լրտեսները միմեանց հետ կոիւ մղեն, նըանք էլ լրտեսեն միմեանց: Ամեն մարդ աշխատում է իր տիրոջը ցոյց տալ, որ ինքը աւելի հաւատարիմ է և աւելի շատ և լաւ բան կարող է անել:

Ամենակարող Ահմեդ Զէլալէդդինը ամենակարող կագրիի զրաբարտութիւնների շնորհիւ երեք անգամ արդէն աքսորուել և կրկին արժանացել է Սուլթանի ներման և աքսորավայրից վերադարձել: Եւ այդ շատ բնական է, որովհետեւ Ահմեդ Զէլալէդդինը իսկապէս իր տիրոջ ամենահաւատարիմ ծառան է, ապացոյց որ նոյնիսկ գոհել է իր ամբողջ հարստութիւնը երիտասարդ-Թիւրքերին արտասահմանից վերադարձնելու և իր հայրենիքի բանտերը լցնելու համար:

Բայց չնայելով զրան՝ նա մի կրթուած արևելագէտ և մինոյն ժամանակ մի շատ հպարտ մարդ է, այնպէս որ արժանի չէ համարում երբ և իյէ թերթ վերցնելու իր ձեռքը:

— Ես առեն ինչ եմ, ասայ նա ինձ մի անգամ, բայց ոչ արքունիքի երկրպագու և պալատական ինտրիգաների բարեկամ:

Սյօր Նազիր բէյը մեծ զիրք ունի: Սուլթանը նրան Իլլըզ-Քիոսկի մօտ գտնուող նշանթաշուն երկու տուն է ընծայել, օրական երկու անգամ նրան Սերայի խոհանոցից կերակուր է ուղարկում և այնքան փող է տալիս, որքան նա կարիք ունի:

Շատ չէ անցել այն օրից, երբ Նազիրը շատերի խօսակցութեան առարկան կազմող նաւատարմին սպայ էր: Նըրան կատարելագործուելու համար կոնդոն ուզարկեցին: Այնտեղ նա լիրերալիզը գտաւ իր ամենակատարեալ ձեռլի: Եւ երբ Կ. Պոլիս վերադարձաւ, արդէն երիտասարդ-Թիւրքերի հոգին և սիւնն էր ներկայացնում:

Կ. Պոլուում նա տեսականապէս զբաղւում էր ոչ միայն ապատութեան զաղափարով, այլ և եռանդուն մասնակցութիւն էր ցոյց տալիս Սերայի բռնակալութեան զէմ պատրաստող ագիտացիային: Նա ուսումնարան հիմնեց, որի անունից հէնց յառաջադիմութեան հոռ է փշում, բայց նա իսկապէս կարողացաւ երկար ժամանակ իր ծրագիրները գաղտնի պահել, մինչև որ նրա ընկեր Ֆէյզի բէյը՝ լուսաւորութեան մինիստրութեան մէկ պաշտօնեայ, Նազիրին Սուլթանի մօտ ամբաստանեց: 1896 թ. օգոստոսին, Նազիրը ձերբակալուեցաւ և կանչուեցաւ գատի Իլլըզ-Քիոսկում: Երբ նա Սերայը թողեց ու հեռացաւ, արդէն նոչակաւոր լրտես էր:

Նա իր նոր զործունէութիւնը փառաւոր կերպով սկսեց: Ամենից առաջ սուլթանին ներկայացրեց իր այն ծրագիրը, որ կարել ու մաշել էր իր ընկերների հետ միասին: Յետոյ նա

ներկայացրեց իր ամբողջ կուսակցութեան ցուցակը և գաղտնի Ատեանին հաղորդեց իր նամակագրութիւնները, իր՝ մինչև այդ ժամանակ դեռ ապրող ընկերների հետ: Դրա հետևանքը եղաւ այն, որ Կ. Պոլսի հրամանատար Քեավլմ փաշան և Հաշուակալ Խորհրդի նախագահ Զիւնդի բէյը աքսորուեցին, առաջինը Մակեդոնիա, իսկ վերջինը գէպի Միջագետք: Այդպէս է ժամանակակից Երիտասարդ-Թիւրքերի կարիերան—ազատութեան հերոսութիւնից մինչև լրտեսութիւն...

Լրտեսութեան մի ուրիշ մեծութիւնն էլ: Մի քանի Ժամանակ սրանից առաջ մայրաբաղաք եկաւ Ալբանացի Մեհմեդ Ռասիդ բէյը: Նա կայսերական թիւնապահ Ալբանացի Թասիր փաշավի շնորհիւ նշանակուեց Հիւնքեար Զառւչ այսինքն կայսերական սերժանտ: Բայց արդէն երկրորդ օրը նա զրպարտեց իր մի քանի պաշտօնակիցներին, և որովհետեւ վերջիններս աւելի լաւ պրոտեկցիա ունիին, զրա համար էլ Մահմէդ Ռասիդը Սերայից վանդուեցաւ: Սակայն նրա բարի կամքը վարձատրուեցաւ և հէնց զրա համար էլ ստացաւ Կ. Պոլսի մաքսատան վերատեսչի պաշտօնը:

Բայց շուտով Մահմէդ Ռասիմը ցոյց տուեց իր Երախտափառութեան ապացոյցը՝ մի քանի անժեղ հայերի իրեն յեղաշփոխական կալանաւորելով և բայցի զրանից զրպարտելով մաքսերի մինիստր Զասան Ֆէնմի փաշային: Վերջինս իսկոյն և եթ աքսորուեցաւ Կ. Պոլսից և երկար ժամանակ չէ անցել այն օրից, երբ նա Սուլթանից կրկին յետ կանչուեց մայրաքաղաք:

Մի փարպետութեան շնորհիւ Մահմէդ Ռասիմը կարողացաւ իր գիրը երկարատև դարձնել: Բիթոլիայում գտնուող իր ընկերներից մի քանիսին, ի թիւս որոց և Տաշկո Պրիկան և Դմիտրի Վլահօն, որոնք միացել էին մակեդոնական շարժման հետ, նա զրաւեց Կ. Պոլսիս: Նրանք այժմ Տրիպոլումն են՝ Աֆրիկայում...

Իրեն մի բնորոշ նմուշ այն ծիծաղելի առիթների, որոնց օգտուում են լրտեսները իրանց նպատակին համելու, ցանկանում եմ այստեղ մի պատմութիւն պատմել, որը անցել է իմ բարեկամ իսպահացի բժիշկ գոլտոր Գո-ի գլխով:

Պոլսոր Գ.-ը Ստամբուլում ենի-Զամիի մօտ գտնուող հըրսապարակի վրայ բանող փորագրիչներից մէկի մօտ մի կնիք պատուիրեց: «Արդարագագատութիւն, եռանդ և ճշմարտութիւն» մակագրութեամբ:

Որոշեալ ժամանակին բժիշկը գնաց իր կնիքը փորագրուից ստանալու, և ձերբակալուեցաւ: Նրան տարան ոստիկանա-

տուն և բանտարկեցին մի մութ ծակի մէջ: Ժամերը անցնում էին միմեանց յետուից: Նրան ձերբակալել էին վաղ առաւօտեան: անցաւ կէս օր, երեկոյ և գիշեր: Նրան բոլորովին սոված և ծարաւ էին պահում: Նա զարկում էր զրանը, ուղում էր քանդել փոքրիկ լուսամուտը, օգնութիւն էր կանչում, կարծելով որ իրան բոլորովին մոռացել են:

Բայց զուր էր նրա ջանքը: Նրան բոլորովին մատնեցին անուշագրութեան և թողին, որ ամբողջ գիշերը աղմուկ հանի: Միայն հետեւեալ օրը նրան հանեցին բանտից և քննութեան ենթարկեցին: Հարցըին նրա անունը, դասակարգը, եկամուտը, տեղեկացան թէ որտեղ է նա ուտում, խմում, բնում, ինչ է կարդում, և մինչև այդ օրը ինչպիսի մարդկանց հետ է յարաբերութիւն ունեցել: Բժիշկը թուեց մինչև 200 անուններ, բայց թիւրքական պաշտօնեան զրեց զրանից միայն 6 կամ 7 անունները, որոնք ոստիկանութեան համար աւելի կարեւոր էին...

Վերջապէս բժշկից հարցըին կնիքի նպատակը և նրա վրայ գտնուած մակագրութեան նշանակութեան մասին:

Մակագրութիւնը Սոլոմոնին է, պատասխանում է բըժիշկը: Այդ խօսքերը ես փորագրել էի տուել բնակարանիս բոլոր գուների վրայ ճիշտ այնպէս, ինչպէս որ մահմեդականները իրենց դուների վրայ Ղուրանից սրբազնան ասացուածքներ են փորագրել տալիս:

Այդպէս խօսելուց յետոյ բժշկին արձակեցին: Սակայն բժիշկը գրանով բոլորովին չհանդատացաւ: Նա գիտէր, որ իրան շարունակ հսկում, դիտում, հալածում են, և բացի դրանից՝ իրան պատահմամբ հանդիպող մարդկանց էլ ամեն բուպէ գտանդ է ողանուած: Կարճ ժամանակ տատանուելուց յետոյ, բժշկը վեցաց Սումբոլից գուրս զանուող երկաթուղու առաջն կայարանը: Այդ կայարանից հեռագրի թելերից մէկը ուղիղ տանում է զէպի իլլըզ-թիօսկ և այդտեղից ուղարկած հեռագիրները անմիջապէս համում են Սուլթանի ձեռքը: Այդտեղից միակ յարմարութիւնը ունի մի բան անմիջապէս հաղորդելու պալատին, խուսափելով մի շարք ինտրիգաներից: Ի հարկէ հազար փորձերից մէկն է յաջողուում զրական հետեւանքով:

Պոկտորը Գ.-ը Սուլթանին հաղորդեց իր հետ պատահած անցըի ճշգրիտ նկարագրութիւնը, որի վերջում աւելացրել էր հետեւեալը:

«Սուլթանիդ ամենահաւատարիմ ստրուկը՝ սրանով աղերսում է ողորմութիւն և ներումն, որովհետեւ ինքը մինչև այժմ

չե իժացել, որ արդարադատութիւն, եռանդ և ճշմարտութիւն խօսքերը արգելուած են եղել»:

Հետևեալ օրը դոկտոր Գին կանչեցին ոստիկանութեան այն ժամանակուայ մինիստր Նազիմ Փաշակի մօտ:

Ես ստացել եմ բարձրագոյն պատուէր, ձեզ կայսերական ինքնակալի ողորմութեանը արժանացնելու, ասաց վեզիրը և յանձնեց բժշկին կասկածելի ու յարքունիս գրաւուած լինիքը և 50 ֆռնտ.,

-արձ ողբաքանար ցցման ա՛Բ, ուղղահայ աշխատակից անոնց
ետու հանոյ ըստու առ է ըստու Ա՛ ապաբանու պատու
ուժ բարելիս դայնու Ա՛ Պոսի բանեթը առ է ապա
ուժամասն Ա՛ Աշխատ ուժամ ուժամ ուժամ անոնց առաջնորդություն Ա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պերայի նահանգպատեմի մօտ: Մեհմեկ փեհլիվան կամ աւազպակապեալը իբրև ոստիկանութեան զիմաւոր: Գալաթա Սերայցում: Ոճապործական արհեստաներին նույիրուած սկսնակների մօտ: Դժգոն կալանաւորներ: Մարդապաններ: Զուարձայի բանտում: Գալաթա Սերայի հարեմում: Այցելութիւն Ստամբուլի մեծ բանտին: Բանտի թատրոնը: Տանջանքները: Սուլթանը և բանտարկուածները:

Թիւրքիայի բանտերի մասին առհասարակ շատ քիչ բան է լաւանի:

Կ. Պոլսի երկու ամենանշանաւոր բանտերից մէկը Գալա-
թա-Սէրայի առաջարգել բանան է. Պէրայում, իսկ երկրորդը
Մէծ-Զափթէյի կենդրոն ական բանտո. Սատարուում:

Գալաթա Սերայը բաղկացած է երեք մասերից՝ ընդարձակ պարտէզ ունեցող մի ուսումնաբանից, Պերայի նահանգապետի պաշտօնական բնակարանից և վերջապէս բանտից:

Ես արգէն վաղուց էի մտադրուել վերջին հիմնարկութիւնը այցելելու, երբ մի օր՝ հայկական խռովութիւններից անմիջապէս յետոյ, վճռական կերպով մտայ բանափ շինութիւնը և պատուիրեցի ցանկութեանս մասին հազորդելու նահանգապետին:

Միւթէսարիֆը ինչ շատ սիրակիո և բառով պնդում է

Զայցելով, որ էնքերը բէյը (խեղճը արդէն մեռել է) միշտ այն թիւքքերէն էր խօսում և մի վառվառն հայրենասէր էր, սակայն նա պատկանում էր թիւքքական այն բարձր պաշտօնեաներին, որոնք եւրոպական կուլտուրայի համոզուած բարեկամներն են և միշտ աշխատում են լաւ բան սովորել, եթէ դա նոյնիսկ արևոտքից է։ Մանաւանդ մի տեսակ առանձին լար-

գանք էր տածում ինպէք բէյը զէպի Գերմանիան։ Նրա որդիի՝
զինուորական աստիճանաւոր Ֆազիլ բէյը իր ժամանակին ու-
սանել է Բերլինում, երկար տարիներ ծառայել է գերմանական
զօրքի մէջ, հրաշալի կերպով խօսում է գերմաններէն և նոյնիսկ
Բերլինցի մի աղջիկ, իբրև իր միակ կինը՝ բերել է Կ. Պոլիս։

Էնվէր բէյի հայրը Հասան Ալի-բէյնէր, որ իրեւ փոստի
և հեռագրատան գլխաւոր վերատեսուց իր ժամանակին ճանա-
պարհների հաղորդակցութեան զործին ամենափայլուն ծառա-
յութիւնն է մատուցել: Երբ Ալին մեռաւ Նրա պաշտօնը ստա-
ցաւ Պերայի այն ժամանակուայ նահանդապետը, այն ինչ վեր-
ջինս յաջորդը փոստի հանդուցեալ նախարարի որդին էր:

Զնայելով որ էնվել բէյը առաջ սատիկանութեան հետ ոչ
մի գործ չէր ունեցել, բայց այնուամենայնիւնա կարողացաւ
իր այդ պաշտօնում, որը զլիսաւորապէս սատիկանական էր,
մինչև իր մահը մնալ: Հայկական խոսվութիւնների ժամանակ
Նրա զբութիւնը ամենից զգուարքն էր: Նրա պարտականութիւնն
էր մայրաքաղաքի ամենանշանաւոր և եւրոպական մասում
կարգ և խաղաղութիւն վերականգնել: Նա պէտք է պահպանէր
վտանգաւոր զբութեան մէջ գտնուող զեսպաններին և հիւպա-
տոսներին և նրանց՝ ամեն մի անկանոն քայլի համար բաւա-
կանութիւն տար: Եւ վերջապէս նա էր սուլթանի առաջ այդ
ըոլոր դէպքերի համար պատասխանատուն: Աստիկանութեան
միւս պարագլուխները կարող էին լոել, թագցնել և վարագու-
րել ամեն ինչ, բայց էնվերի գործունէութեան վրայ էր ուղ-
ղուած եւրոպայի հսկող ու քննող ազբը: Պէտք է ասել, որ նը-
րան յաջողուեց ճարպիկութեան և տակախ շնորհիւ մի քանի
վտանգաւոր բոուէնսերի յաղթել: Այդ բանին պարզ ապացոյց է
այն հանգամանքը, որ նա դրանից յետոյ գեռ երկար ժամանակ
մնաց իր պաշտօնում, այն ինչ տէրունական ուրիշ շատ պաշ-
տօնիքներ միմեանց ետքից փոխեցին իրանց պաշտօնները:

Ես նորին վեհմափայլութեանը լաւ տրամադրութեան մէջ գտայ: Ենվեր-բեյին, իր ճարպիկութեան չնորհիւ յաջողուել էր մի քանի, վաղուց կասկածելի սրբիկաների ձերբակալելու և դրա համար էլ, իմ ներս մտնելու բոպեին նա լաւ էր տրամադրուած:

Նա սիրով կատարեց ցանկութիւնս և թոյլ տռւեց ինձ
բանսոր այցելելու:

Էնվեր թէյի որդի Փաղիլ թէյը, որ հէսց այդ ժամանակ
իր հօր մօտ էր գանւում, խնդրեց իրեն թոյլ տալ ինձ ուղեկ-
ցելու։ Շնորհիւ այն հանգամանքի, որ նա հէսց ինքն էլ գրա-
նից առաջ բանտար երրէք չէր տիսել, ես կարողացայ բանտում

այնպիսի բաներ էլ տեսնել, որոնք որբան էլ շատ սիրալիր լիներ նահանգապետը, իմ առաջ միշտ դադանի մնացած կը լինէն:

Իրեւ առաջնորդներ և պահապաններ մեզ ուղեկցում էին Պերայի դատարանի անդամ և ոստիկանութեան գլխաւոր Մուստափա էֆէնդին։ Կ. Պոլսի ամենայացանի և ծանօթ պալցիականը, ոստիկանութեան հանգուցեալ մինիստր Քեամիլը որդի և Պերայի նահանգապետի քարտուղար Մեհմեդ Ալի ըէյլ որ մի ինտելիգենտ և երիտասարդ պարոն էր, որ աւելի շուտ պիտանի կը լինէր զետպանական որևէ խորհրդականի պաշտօնիքան թէ ոստիկանութեան համար և վերջապէս Մեհմեդի վեհլիւանը։

Վերջինս արևելեան մի սքանչելիք է։

Գալաթա Սերայի ոստիկանութեան գլխաւոր Մեհմեդ Փելիվանը դեռ մի քանի տարի սրանից առաջ Բրուսայում ամենաաերկւզալի աւազակապետն էր։ Տարիներ շարունակ նա կը սուել, արհամարհել և յաղթել էր և տէրունական պաշտօնեաներին, և ոստիկանութեան և զօրքին։

Ծերանաւուց և յոգնելուց յետոյ նա վճռեց տէրութիւնից կիսաթոշակ ստանալ և գրկարաց էլ ընդունուեցաւ իրեւ լաւ ծանօթ աւազակների կայաների և խորշերի հետ, նա բաւական մեծ ծառայութիւն մատուցեց կառավարութեան և վարձատրութեան փոխարէն նրանից ստացաւ մայրաքաղաքում։ Գալաթա Սերայում այս ժշտական և չաղ պաշտօնը։

Նա մի յաղթանդամ, մօտ երկու մետր բարձրութեամբ և համապատասխան լայնութեամբ մարդ է։ Նա ունի թուխ երես, երկար և կոպիտ բեխեր և խոպոտ ձայն, այնպէս որ խօսելու ժամանակ կարծես ամեն ինչ գողում էնրա շուրջը։ Բայց և մինոյն ժամանակ այդ վիթխարին երեխայական բարեսըստութեան և արևելցուն յատուկ շողոքորթող սիրալիրութիւն ունի։

Այդպիսով մեր խումբը միացնում էր իրար հետ չորս միւնեանց հետ յարմարուող էլեմենտներ։ այն է իշխանութիւնը, արդարադատութիւնը, զօրքը և հասարակական կարծիքը։

Վերջապէս սկսեցինք մեր պատուը բանտում։

Ամենից առաջ մենք ներս մտանք վատ լուսաւորուած և վատահոտ մի լարիւրինթոս, որտեղ լցուած էր ամեն տեսակ մարդկանցով, տղամարդիկ, կանայք, մանուկներ, գանգատողներ, մեղադրեալներ և վկաներ, որոնք բոլորը կկպել էին գետնի վրայ, ծխուժ, որ նրանց համար պատրաստում էր միւթեսարիֆի հոգեորականը, իմամը և 10 փարայով վաճառում։

Մենք բարձրանում և իջնում էինք սանդուխներով մինչեւ որ վերջապէս հասանք մի վանդակապատ դռան, դռուը զարկելուց յետոյ երևաց մի պաշտօնեայ, որին իբրև բանտի վերատեսուչ մասիմ ըէյ, մեզ ներկայացրին։

Ես ստիպուած էի վաւազանս, իսկ մազիլ ըէյը իր թուրը գրում թողնելու։ Դրանից յետոյ մեր առաջ բացուեցաւ դռուը և մեզ արդէն Գալաթա Սերայի բանտումն էինք։

Առաջին դահլիճում մենք պատահեցինք քսան աղաների 14—18 տարեկան, զրպանի գողեր, որ մեծ ապագայ խռոտացող սկսակներ էին։ Նրանք բոլորն էլ լաւ էին տրամադրուած և թուղթ էին խաղում։

Երկրորդ դահլիճում մենք պատահեցինք մի աւելի լուրջ հասարակութեան։ Այնտեղ մօտ 10 քառակուսի մետր տարածութեան վրայ խմբուել էին 15 մարդիկ, որոնք բանտարկուել էին մարդկասպանութեան համար, սպասում էին նախնականքնութեան վերջանալուն, որպէսզի վերջնական դատի ննթարկուեն։ Սենեակում ոչ մի կան կարասիքի կառի հետք անգամ չկար։ Ոչ սեղան, ոչ աթոռ, ոչ անկողին, ոչ նստարան և ոչ էլ զիմի բարձ։ Բանտարկեանելը արևելեան սովորութեամբ կկըզել էին, ոմանք քնում, ոմանք նստած կամ պառկած էին, միձեռքը կամ ոտնամանները զիմի տակ բարձի փոխարէն գրած։ Սենեակի գետինը թէկ մաքուր էր լուսացուած, բայց ներսի օղը ապականուած և ճնշող էր, ճնայելով սենեակի բարձր առաստաղին։

Բոլորովին բարձր, պատի վրայ ես նկատեցի մի շատ փոքր լուսամուտ, բայց որը երկաթեայ թերթերով ծածկուած և ամրացրուած էր։ Բանտի վերատեսուչը ինձ պատմեց զրապատճառը։ Լուսամուտը սկզբում բոլորովին բաց է եղել և նրա միջով օղը և լոյսը կարողացել են ներս մտնել։ Բայց յանկարձ մի օր բանտի հարեան տներից սաստիկ գանգատաներ են բարձրանում, որ իբր թէ այդ լուսամուտից բանտարկեաները զէպի հարեան աները և անցորդների վրայ ամեն տեսակ բաներ են շպրտում, բանտարկեաները միմեանց ուսի վրայ բարձրանալով համսում էին մինչեւ բարձր լուսամուտը և այնտեղից զրէժինգիր էին լինում վոլոցով անցուղարձ անող մարդկանցից, որ իրանք զրկուել էին աղատութիւնից։

Այստեղ մենք անցանք մի շարք սենեակներով, որոնք բոլորն էլ յիշեցնում էին մեր նկարազբած սենեակը։ Այնտեղ մենք տեսանք ծեր, երիտասարդ, թիւրքեր, հայեր, քրդեր, պարսիկներ, իսպանացիներ և նամանաւանդ բաւականաչափ յոյներ։

Սեսհակներից մէկում ամբոխի միջից յանկարծ բարձրացաւ մի յոյն երիտասարդ և ուղիղ դէպի ինձ գալով, թիւրքերէն ասաց հետևեալը,

«Զելեպի, պարոն. արդէն երկու ամիս է, որ ես այստեղ բանտարկուած եմ. հագուստներս բոլորովին կեղտոտուել և պատառուել են և ես նոյնիսկ չգիտեմ, թէ ինչու են ինձ տանջում այստեղ»:

Որովհետեւ Գալաթա Սերայը միայն առաջարգել բանտ է, որտեղի բանտարկութիւնը երեք օրից աւելի չէ տեսում, զրահամար ինձ զարմացրին երիտասարդ բանտարկեալի ասած «Երկու ամիս խօսքերը»:

Վերատեսուչ Ռասիմ բէյը, որ արդէն նկատել էր զարմանքս, հեռացրեց մեղանից գանգատող բանտարկեալին և կարծես ինձանից մի տեսակ ներդութիւն խնդրելով, ասաց մեղ.

Նա զրապան կտրող ամենայանդուզն գողերից մէկն է, որ չնայելով իր 18 տարեկան հասակին, արդէն 18 անգամ զողութեան համար պատժուել է:

Մի ուրիշ զահլիճում իմ հետաքրքրութիւնս զրաւեց մի ծերունի մարդ: Նա մի թիւրք էր թեր, սպիտակ միքուրով և լաւ աչքերով:

— Քանի տարեկան ես դու, հարցը ի ես նրան:

— 79 տարեկան, պատասխանեց նա:

— Ինչու համար է այս ծերունին բանտարկուել:

— Մարդապանութեան համար, հանգիստ պատասխանեց ծերունին հարցիս:

Ծերունին թուլուժբաշխների խմբի առաջնորդն է եղել, այսպէս կոչուած վայրենի հրդեհաշէջների պարագլուխը: Մինչ իր ծերանալը նա պատժական օրէնքի հետ ոչ մի անգամ չէր ըսդհարուել: Հայկական խոռովութիւնների ժամանակ ծերունին մի անգամ նկատեց, որ իր ստորագրեալներից մէկը բարբարուար կտոր էր անում մի, արդէն սպանուած հայի մարմինը. նա չկարողացաւ այդ տեսարանին ականատես լինել, ստորագրեալին մատնացոյց արեց իր կոպտութիւնը, բայց վերջին հայհոյեց իր գլխաւորին: Ծերունին այդ բանից սաստիկ բարկացաւ, դաշոնով վերջ զրաւ իր ստորագրեալի կեանքին. զրահ հետևանքը այն եղաւ, որ 80 տարեկան հասակում մըտաւ բանտ:

Ծերունին էլ հաստատում էր, որ ինքը արդէն մի բանի շաբաթ բանտարկուած է և մինչեւ այժմ իրան չեն քննում: Ստակայն նա չէր գանգատուում:

Իր պատմութիւնը վերջացնելուց յետոյ, ծերունին հան-

դարտութեամբ շարունակեց ծխել իր նարգիլէն, որի հաճոյքից եռ նրան զրկել էի իմ հետաքրքրութեամբ:

Թիւրքիրը իրանց ճակատագրական խղճով և իրանց հանգիստ համակերպութեամբ աւելի հեշտութեամբ և համբերութեամբ են տանում բանտարկութիւնը: Նրանք շարունակում են իրանց բէքը և բանտում, այստեղ էլ վարում են այնպիսի անգործ կեանք, ինչպէս և սրճարաններում և սպասելով սպասում են զատապարտուելու կամ ազատուելու:

Մի քանի սեսհակներում տեսարանը բաւական իդիլիական էր: Ահա պատկել են 12—20 և աւելի սրիկաներ և անմեղ կալանաւորներ մի փոքրիկ տարածութիւնն վրայ, ծխում, խըմում են և պատմութիւններ են անում:

Օրեկան երկու մնագամ բանտարկեալները բանտային վարչութիւնից ուտելիք են ստանում. առաւօտեան ստանում են 3/4 քիլոգրամ հաց, յետոյ բբինձ կամ գետնախնձոր, իսկ երեկոյեան եփած միս և նոյն քանակութեամբ հաց, որովհետեւ բանտարկեալները այստեղ առաջարգել բանտումն են զանուում, և նախնական քննութեան մէջ նրանք զեռ մեղագրեալներ և ոչ թէ զատապարտեալներ են:

Իւրաքանչիւր սեսհակի վրայ հսկում է մի պահապան, որի պարտաւորութիւնն է օրեկան երկու անգամ բանտարկեալների վարքի մասին տեղեկութիւններ հաղորդել բանտի վերատեսչն, բայց և որը իրաւունք չունի նրանց ոտնձգութիւնները իր ցանկութեամբ պատժելու:

Բանտի շինութեան մի ուրիշ մասում, որ մի մեծ նախասեսնեակով բաժանուած է տղամարդկանց սեսհակներից, զըտնուում է կանանց տեղը, այսինքն բանտի հարեմը:

Կանանց մասի վրայ հսկում է Զերիէ խանուում անունով ծեր կինը, որ մեղ խոնարհ կերպով բարի գալուստ մաղթեց. Երբ միւթեարբիփի պատժելու լուց:

Նա առաջնորդեց մեղ մի փոքր և ազօտ լուսաւորուած սեսհակ, այնպէս որ մենք սկզբում ոչինչ չտեսանք և հետզհետէ միայն վարժուեցինք այդ տարածութեան ազօտ լոյսին:

Ինչպէս մեղ հաւատացնում էր Զերիէ խանուում, այդ բանտում միայն այդ երեք կին բանտարկեալներն են, որոնք մեր առաջ էին գտնուում: Դրանցից առաջինը մի յոյն կին էր, որ իր սիրեկանին նողաստել էր գողութիւն անելու, երկրորդը մի գեղեցիկ թրբուհի էր, որ մեր ներս մտնելուց անմիջապէս յետոյ երեսը ծածկեց քողով. նրան էլ բանտարկել էին իր վատ վարքի համար և զրան սպասնում էր սաստիկ պատիժը. երրորդ կինը որ քրդուհի էր, որի մօտ էին և նրա 4 փոքրիկ զատա-



ները, որոնց ստիպուած էին եղել նոյնպէս բանտարկել իրանց մօր հետ։ Այդ փոքրիկ արարածները, ինչպէս պարզ երևում էր, մութ և տաք բանտում իրանց աւելի լաւ էին զգում, քան թէ դուրս՝ ազատ երկնակամարի տակ, որովհետև շարունակ խաղում էին։ Երբ քրդուհին մեր, կանանց մասը մտնելը նկատեց, նա մի վայրենի սկանդալ սարքեց և գոռաց։

«Դուք ուշադրութիւն չդարձրիք իմ ունեցած ազատութեան և ինձ մտցրիք մի այսպիսի ծակ։ Դուք ինձ ընկեր դարձրիք մի գողի և մի անառակ կնոջ։ Այժմ էլ ինձ մատ գեաւուր էք բերում։ Անիծեալ լինկիք դուք»...

Այս խօսքերը լաւուց յետոյ մենք իսկոյն և եթ յետ բաշուեցինք և իմ պտոյտը Գալաթա-Սելայում վերջացաւ։

Ստամբուլում Մեծ Զափիէյում գտնում է մայրաքաղաքի իսկական բանտը, որտեղ ապրում են ցմահ գատապարտուած արարածները։ Դրանց վրայ աւելի խիստ հսկողութիւն է նշանակուած, նամանաւանդ այն օրից ի վեր, երբ Շեֆիկ Բէյը ստիկանութեան նախարար է նշանակուել։

Երբ ստիկանութեան նախարար էր Սիրիայի այժմեան գեներալ նահանգապետ Նազիմ փաշան, Ստամբուլում բանտարկեալների գրութիւնը գեռ, և անհամեմատ լաւ էր։ Իրու մի ազատամիտ և եւրոպական կուտուրայի բարեկամ մարդ, նա բանտարկեալներին ըստ իրանց յանցանքի ծանրութեան բաժանում էր իսմերի և եթէ մէկի յանցանքը գատարանի կողմից զեռ ևս հաստատուած չէր, նրան որոշ արտօնութիւն և ազատութիւն էր տալիս։

Նրա օրով նոյնիօկ պատահել է, որ բանտարկեալները դատաւորների մեծ գանձիճում ռամազանի գիշերները ստիկանական հսկողութեան ներքոյ ներկայացումներ են կազմակերպել։ Ներկայացրել են ծիծաղաշարժ կտորներ մեծ մասամբ նասբէդին Խոջայից, որ ապրում էր մեզանից մօտ մի զար առաջ։ Կանանց գերեն էլ ներկայացրել էին տղամարդիկ կանացի հագուստներով։ Դերասանները իբրև վարձատրութիւն ստացել են ծխախոտ և շաքարեղին։ Հարկաւոր է նկատել, որ թիւրքական բանտում թատրոնը արտաքոյ կարգի մի լուսաւոր երկոյթ է։ Իսկ դերասանները և հանդիսականները... Մեծ Զափիէյի բանտը վատ հոչակ է ստացել այն խորհրդաւոր դէպքերի շնորհիւ, որոնք տեղի են ունեցել այնտեղ հայկական խոռվութիւնների ժամանակ։ Այնտեղ շատ յարգի են բարբարոս գարերի մարդկանց տանջելու համար ստեղծուած զանազան գործիքները։

Մի անգամ ես այնտեղ տեսայ 70 տարեկան մի ծերունի, որը գրանից երկու շաբաթ առաջ միայն 28 տարեկան է եղել։

Սուլթանը յաճախ է ցանկութիւն յայտնել բանտարկեալների վիճակը մեղմացնելու։ Տարեկան երկու կամ երեք անգամ նա արդարագատութեամ մինչիստից պահանջում է այն բանտարկեալների ցուցակը, որոնք ուղղում են և նրանց ներումն է շնորհում։ Իր ծննդեան կամ գահակալութեան օրերին նա բանտերը կերակուր և փող է ուղարկում։ Սուլթանի օրինակին երբեմն հետեւում են և պալատական կանացը։ Բայց զժբաղդաբար բանտարկեալները ստանում են շատ շատ կերակուրը իսկ փողը անյայտանում է բանտի պաշտօնեաների գրպանում, եթէ դա առաջուց արդէն չէ կպել փող բերողների ձեռքին։ Սուլթանի կամքը միշտ լաւ է (?). բայց այդ կամքից չեն ակնածում այն օրգանները, որոնց յանձնուած է նրա ի կատար ածելլը։

Ք.

ՈՒՈՒՄ ԵԼԼԻԱԿԱՆ-ԱՆԱՄՊՈՂԱԿԱՆ աւազակային ոռմանտիկա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒԽԻՆ

Անապահովութիւն մայրաքաղաքում։ Լեզուանի անզիացին։ Գրպանի գողեր։ Ղալաթիայի անառականոցները։ Գերայի շանտանցները և Քեազիմ փաշայի թաղը։ Եալովայի աւագանուածի պամութիւնը։ Մեհմէդ փեհլիւանը մի անգամ էլ Ալբանիայում, Սակեղոնիայում և Սնատողիայում։ Աւազակային մի պատմութիւն կամ աւազակից մինչ ստիկանութեան մինիստրի անձնական ծառան։

Բալկանեան թերակղզին միշտ աւզակների Դորագոն է եղել։ Նա այժմ էլ նոյնէ, ինչպէս որ ամբողջ Թիւրքիան Եւրոպայի և Ասիայի վերաբերմամբ։

Մայրաքաղաքում շատ բան, իհարկէ, գեռ զէպի լաւն է փոխուել։ Այնտեղ կարելի է թէ ցերեկը և թէ գիշերը գլխաւոր փողոցներով անցնել, առանց մի ըոսէ կեանքի ապահովութեան մասին կասկածելու։

Բայց շատ անհաճիլի բան է, երբ մարդս փողոցներով անցնելու ժամանակ պատահում է գիշերապահներին և նրանց հետ ընդհարւում։ Ճիշտ այդպիսի մի զէպի պատահեց ինձ, երբ ես մի անգամ երեկոյեան ժամը 11-ին մի տիկնոջ հետ գուրս եկայ բնակարանիցս գնալու դիմացի մի տուն, բարեկամ ընտանիքներիս մէկին այցելելու, երբ 6 մարդուց բաղկացած գիշերապահների խումբը ինձ ուղեկցող տիկնոջ անպատուեց։ Այդպիսի զէպի պատահած ժամանակ խաղաղ վարմունքը ամենագովիլի յատկութիւն է։ Իմ միակ զէնքս ձեռնափայտս էր։ Դա բարձրացներուց յետոյ 6 զինուորները իսկոյն յետ քաշու-

Նցին յ Ղուոքապրդենգիսէքը Ռոպայզպինիւ գլեպքերապատճելիս
կեսպանները կամակիցեն ճայնկանում առևպեսոք և յանձի, ոյ դր
սրանք շայդպիսի վերաբանի ջաբագրքների պատճենավորքաւա-
կան գալ միբառապ են ուսւել նրանց պետու վարդկանց յ յոմյանից
ամ չեւույո ընկած թաղերում կփերը բաժանակի վրանիկը
թաղերից բազարնիմնծեանդպաշէն չ բոյ և զոյլայմի ցամացադ-
րադ թէ պակմս սպակմս կամակնեց մասեկամ մի եթիսանաքը ինչ հետո
պատճեած յ մի ու գեցպքաւերը բանրանը տատիկանները կործարուեցին իրեւ-
բանաթարկեցին նատիկաննապանքը Զորք որից առաջաւոր մի այն վրձն-
նեցին այդ ու գլուխութացց գլեպապարար մի իւսաւու ներիսանապարարը
ուժով վճառեւ նորաներու շաբաթ անդուի կերպով ւեցին յ միալուրեմի ։ Եւ
որովհնակնակ Պերայինմի հարուստ և շամանինի վրանիկքի ազմու-
ւակ էր, գրա համար էլ ոստիկանական աւազակները պնտուիս-
եցան։

Էլ իրաւունք ունեն Թիւրքիայի երախտագիտութիւնից օգտուելու, դրա համար էլ զլիսորապէս մօտենում են Թիւրքական ապրանքներին:

Հայկական և յունական թաղերում մարդասպանութիւնները բաւական յաճախ են պատահում:

Հայը ընդհանրապէս վախենում է հարցուածներից, բայց
եթէ նրան փողի հարցում մի քիչ խաբում են, նա այն ժա-
մանակ դիմում է դանակի, նոյն իսկ ամենաշնչին բաների հա-
մար:

Թիւրքիայի յոյնը մէկի հետ գործ ունեցած դէպքում սիւրում է իր վիճաբանութիւնը դաշոյնի օգնութեամբ համեմել:

Օտարականը տպահով ուղեկցութեամբ Գալաթայի փողոցներով անցնում է, նկատում է մի շարք հետաքրքիր տեսարաններ, որոնք մեծ մասամբ զիշեր ժամանակն են տեղի ունենում:

Այդ փողոցները անառակլութեան և ոճքագործութեան ամենամութ խորշերն են ներկայանում: Այդաել են գտնուած ամենախայտառակ հիւրանոցները և սրճարանները, որոնց անունները կուրացուցիչ են:

Անցորդը ամենից առաջ նկատում է «Անտիլոպէ» կաֆէ շանտանը: Մրճարանի գոյնզգոյն լապտերների վրայ ջութակ-ների և երաժշտական ուրիշ գործիքներ նկարուած:

Նրա հանդէպ գտնւում է «Աֆրիկա» մեծ և կեղտու սըր-ձարանը: Այստեղ 30 աղջիկ և ծառայում և պարում և երգում են: Սրճարանի զլխաւոր բաժանմունքի կողքին գտնվում է chambre séparé-ն: Մուտքի վճար չեն վերցնում, սակայն սուրճը 10 կամ 20 փարա սովորական գնի փոխարէն արժէ 2 պիաստր. բացի սրճից այդտեղ կարելի է ստանալ լիմոնադ, թէյ, խակ ողելից խմիչքներից միայն մաստիկը:

Երևակայեցէք, ընթերցող, հետևեալ պատկերը: Սպիտակ վարդիկ և սև վերնազգիստը հագած մի յոյն տղայ, որ իր գըտակը ծուռ է զրբել, ծխում և պարում է մի գունատ, ամենաշատը 12 տարեկան հայուհու հետ, որի մազերը անկանոն կերպով թափթափուած են ուսերի և մէջքի վրայ: Աղջկէն էլ պարելու ժամանակ ծխում է: Վերջապէս տեղի է ունենուած պառազ: Նա երկար պարելուց յետոյ շատ յոգնում և բոլորովին գունատ երեսը դնում է երիտասարդի ուսի վրայ և յետոյ... Վերջի վերջոյ թշուառ աղջկան առաջարկում են Chambray separate և բաղդախնդիր մարդիկ իրանց մատնում են խայտառակութեան:

Երրորդ գժոխքն ներկայանում է «Օդեսա» սրճարանը՝
որ իր հիւրերի համար մի ամբողջ հիւրանոց էլ ունի:

«International» սրճարանում կարելի է լսել աշխարհիտ
բոլոր լեզուները, որտեղ Պարիզի պարող կանանց հետ մրցում
են և հայուհիները, իրանց անբարոյական հիւրերի կեղտուր
կրքերին բաւականութիւն տալու։ Դրանց հաճոյանալու համար
հանդիսականներից ումանք էլ միմեանց գէմ են մրցում և յաճախ
դաշոյնի հարուածներն են որոշում, թէ միմեաց հետ մրցող
հանդիսականներից որը պէտք է գերադասութիւն ստանայ...

Փողոցի ծայրում կան երկու ուրիշ տեղեր էլ զրանցից
մէկը «Մօսկովա» թէյարանն է, որ զարդարուած է թուրքիա-
կան և սուսական դրօշակներով։ Այդտեղ նուագում է մեքենա-
յական օրկեստրը։ Հստ երեսյթին ներսում ամէն ինչ է։ Եր-
կրորդ տեղը մի թատրոն է, որի մուտքը առաջին կարգի հա-
մար արժէ մի ֆրանկ, իսկ երկրորդ կարգը կէս ֆրանկ։ Թա-
տրոնի սանդուղքի պատերը զարդարուծ են վեզուվի և զանազան
երկների բոյսերի նկարներով։ Դահլիճը ունի 80 աթոռ և 19
օթեակ, Ադտեղի երաժշտութիւնը բաղկացած է. մի ջութակից,
մէկ կլարնետից, մէկ շեփորից և մէկ թմբուկից։ Ներկայա-
ցնում են մի պանտոմիմա աւազակների կեանքից։ Հետաքրիր էր
ընթերցող, այնպէս չէ։ Իրաքանչիւր քառորդ ժամից յետոց
այդ կտորը կրկնում են։

Ինչ որ Գալան է ներկայացնում այդ տեսակէտից, միե-
նոյն բանը աւելի շքեղ կերպով կարելի է գտնել Պերայի «Palais
Crystal» և «Concordia», հիւրանոցներում, որոնք թուղթ խաղա-
լու բաժանմունքներ էլ ունեն։

Պերայի գողոցներով անցնող օտարականը գիշեր ժամա-
նակ յաճախ պատահում է հայերի, որոնք իրը թէ մուրացկան-
ներ են։ Բայց ոչ, սրանք մեծ մասամբ գողոցներում կանգնում
և օտարականներին առաջարկում են իրանց հետևել դէպի այն-
պիսի տներ, որտեղ խակական թիւրքուհիներ իրանց սէրն են
վաճարում։ Այդ թիւրքուհիների փոխարէն սովորաբար հայու-
հիներ են լինում, միայն թիւրք կնոջ տարագով։ Սակայն
Ստամբուլում կան և բազմաթիւ տներ էլ որտեղ անբարոյական-
բնակչուհիները իսկական թիւրքուհիներ են։ Բայց այդտեղ
մտնել կարող են միտիայն մուսուլմանները։ Վայը տարել է
այն եւրոպացուն, որին այդ աներից որևէ մէկում յանկարծ
բռննցին։ այդպիսի դէպում նրան նոյն իսկ իր դեսպանն է
հրաժարում պաշտպանելու։

Կ. Պուսի ամենավատահամբաւ թաղը Քասիմ փաշայի-
թաղն է։

Այդ թաղը, որ շրջապատուած է նոճիներով և գերեզմա-
նատներով, հեռուից իդիլիական տպաւորութիւն է թողնում։
Բայց երբ անցորդը այդ թաղին աւելի է մօտենում, նկատում է
թշուառ տներ և մի շարք նեղ ու կեղտուա փողոցներ։ Այդ
թաղի միջով հոսում է մի շատ կեղտուա առուակ, որ կոչւում է
Սոխակների գետ...

Այդ թաղումն է ապրում մայրաքաղաքի կղկղանքը։ Տները
նման են ճիւղերի, որոնք միմեանց մօտ են, որ կարծես իրար վրայ
են շինուած։ Նրա գողոցներում նոյնպէս սոտիկանների դրութիւը
վտանգաւոր է՝ այդ թաղի բնակլչները իրանց նեղ փողոցնե-
րում կարող են ամեն կերպ վրէժինդիր լինել։ Այդտեղ է կազ-
մում ամեն տեսակ աւազակութիւնների խսկական բոյնը։
աւազակութիւններ, որոնցից մեծ մասը անյայտ են մնում և
ծածկւում։

Իսկ ինչ խօսք այն աւազակութիւնների մասին, որոնք
աւելի մեծ չափով կատարուած են մայրաքաղաքից դուրս,
Թիւրքիայի ներքին գաւառներում։ Այնտեղ աւազակութիւնները
լայն և ընդարձակ ասպարէզ ունեն։

Կարծեմ շատերին ծանօթ կը լինի այն դէպը, երբ
աւազակների մի խումբ Աթանաս անունով առաջնորդի
ողեկավարութեամբ Զերքեղիայում յարձակուեց Orient Express
գնացքի վրայ և եւրոպան իր ժամանակին այդ դէպի վրայ
ուշադրութիւն դարձեց, միմիայն նրա համար, որովհետև
Orient Express գնացքն էր։ Բայց էլ որքան աւազակութիւն-
ներ են պատահում, որքան արտաքին աշխարհին անյայտ են
մնում։

Առանձին ուշադրութեան արժանի է այն երկու կանանց
առևանդումն, որ տեղի ունեցաւ 1896 թ. յունիսին։

Գննդեամբ ֆրանսիացի մադամ Բրանզօն, որ Սուլթանի
պալատի մանկարածուհին էր և 18 տարեկան ու գեղեցիկ հայ-
ունի օրիորդ Պարագեմինեանը, որ այն ժամանակուա սերբե-
ական դեսպանատան գրագուման թէրհանի քենին էր, Եալովա-
յում զրօննելու ժամանակ օր ու ցերեկով առևանդուեցան աւա-
զակների մի խմբից։ Եալովան կ. Պոլսի նշանաւոր հանքային
ջուր ունեցող ամարանոցնէ, որտեղ գնում է մեծ մասամբ Պեր-
այի լաւ հասարակութիւնը։ Կարեւոր եմ համարու աւելացնել
և այն որ յափշտակուածներին ուղեկցում էին մի կառապան,
մի ծառայ և երկու ժանդարմներ։

Տիկին Բրանզօն 12 օր բանտարկուելուց յետոյ, երբ նա
հայուհու հետ վերադարձաւ Պերա, ինձ պատմեց իր հետ
պատահած արկածները թուրք աւազակների շնորհիւ։

«Եեց տարիի է արդէն, այդպէս սկսեց տիկինը իր պատմութիւնը, որ ես ամառախին մի քանի ամիսները եալովայումն էի անցկացնում: Միանգամ ես տիկին Պարաղեմեանի և նրա աղջկայ հետ զրօնում էի եալովայի շրջակայրում: Զրօնանքի ժամանակ մեզ ուղեկցում էին մեր կառապանը, ծառան, և բացի դրանից երկու ժանդարմներ: Յանկարծ մենք նկատեցինք, որ սարի ստորոտից դէպի մեզ են վազում 11 հոգուց բաղկացած աւազակների մի խումբ: Դրանք բոլորն էլ ալբանական տարազով վիթխակ մարդիկ էին, որոնք անմիջապէս շրջապատեցին մեզ: Մեզ ուղեկցող ժանդարմները անօգուտ համարելով նրանց հետ կուր սկսելը, իսկոյն և եթ փախան: Մեր ծառան ընդհակառակն աշխատեց մեզ պաշտպանել բայց այնպիսի հարուածներ ստացաւ աւազակներից, որ հազիւ էր կարողանում տեղից շարժուել: Աւազակները մեզ կալանաւորուած հրատարակեցին: Սարսափը տիրել էր մեզ, նամանաւանդ տիկին Պարաղեմինեանին, որ առանց այն էլ հիւանդութ զրութեան մէջ էր գտնւում: Այդ ժամանակ աւազակյին խմբի առաջնորդը, որին միւսները կապիտան Գեօրգի էին անուանում, պատուիրեց տիկին Պարաղեմինեանին մեր ծառայի հետ միասին վերադառնալ բաղաք և պատահած դէպքի մասին պատմել: Ակզրում աւազակները ցանկանում էին և տիկին Պարաղեմինեանին էլ պահել, ստկայն երբ աւազակների առաջնորդը տիկինոջը խիստ քննեց, դարձաւ իր ստորադրեաներին, և ասաց. «Տիկինը թէ պառաւ և թէ հիւանդէ, չեմ կարծում որ նրա համար մեզ փող վճարեն, այլ կարող է պատահել, որ նրան վերջի վերջոյ մեզ թողնեն...» Այդ խօսքերից յետոյ տիկինը մեղանից հեռացաւ և աւելի շուտ մեռած, քանի կենդանի հասաւ քաղաք, այն ինչ մեզ, շրջապատած աւազակները փախցրին դէպի հարեւան լեռները, ուշազբութիւն-չդարցնելով մեր աղաչանքներին և լաց ու կոծին: Այստեղ կապիտան Գեօրգին մօտեցաւ մեզ, ներողութիւն ինդրեց, որ մեզ առևանգել են և միիթարեց հետեւեալ խօսքերով:

«Զվախենաք, խնդրեմ, որ ձեզ հետ որևէ է վատ բան պատահի: Մենք ձեզ ոչ մի անհաճելի բան չենք անիւ, թէ մեզ չհալածեն: Մենք ցանկանում ենք ձեզ համար միայն վըլրատնքի փող ստանալ, որից յետոյ ձեզ բոլորովին ազատութիւն շնորհենք: Մինչև այդ ժամանակ դուք ձեզ կարող էք մեր ոյցերը համարել:

Մեզ շարունակ շտապեցնում էին դէպի սարի անտառը զնալու:

Զայելով, որ նրանք երկու ձի էլ զբել էին և եր տրամտղութեան տակը բայց անանցանելի ճանապարհների պատ-

Ճառով կրիմթէջնանդաբիրինսէլի և ճառեցնութիւնը և Առավետօնի անդինը մեզ պատուիրեցին Կյանդահաննեցի շաբախող քերեկը գերեծէլը հանդիսանուածացի կիշիրը ճանապահը պարկինա չափանակակել և ետքը եկմա Աշտարակից մէնք 30 ժամուայի ճամունադաբիրին և ենթադրութիւնների առաջականութիւնը պատուամ:

Կապիտանը մի և ստուգի ու ռազմական գործությունների համակի համար, իր բևեռ պատվածք է 20,000 լիտր կանոքությամբ լրացնելու համար 15,000 գոտի աշխատավոր կամքագործությունների համար։ Այս ամսագործությունը կը յանձնել էին աւազակներից մէկին տանելու և համբաւումն էին, որ նու ապահով կերպով կամքագործությունների առաջընթացը որոշ ժամանակունացել էին, որ եթէ իրանունքառամբական կամքագործությունների համար հասցնեն կամ ճանապարհին կարած չէնքարած էնց դիմումներին որոշություն մէնք կը մորթեն։ Նամակառարը ինչպես կարծիք է առաջանաւ ինքնական հարաբերություններու մասնաւոր պէտք է աշխատէինք չյուսահատերեք... յայտ և առուն զի լաւումա եւ մենք օրէցօր սպասում էինք. և այսու քրոջնա զմն զմիշ Աւազակները անտառի հետ ընդունակություն ունեն գործությունների համար իրանց բնակութեան համար որոշ տեղ չունեն։ Մէնք մեր նստած տեղը երեք անգամ փոխեցինք Այստեղու ու ոչ Ստուն կար և ոչ էլ վրան էր զարկուած։ Աւազակները դրացին պէտք էր րից իրանց հետ ոչինչ չէին վերցրել, նոյն նշանի պատճառք։ Այս ամսագործությունը էինք թուրքական չոր հացով և արդյունամենի մօտ 12 օր։ Սարսափելի է չէ։ Եւ եթէ մեր դրութիւնները դժուար կար ժամանակ անորոշ մնար, գուցէ այդ չոր հացին պէտք ու միանք յինք...

Մենք բաղկաւոր էինք, որ երկու հոգի միապնացվենք Ա դէպ կապիտանը մի անգամ ասաց ինձ որ ինքը չէ սիրում առևանգել մի կնոջ, այլ երկուսը միասին, որպէսպիշտուախցուն նունը ինայտի:

Աւաղակների քաղաքավարութեան համար մենք չէինք կը լինա
րող գանգատուել: Ոչ ոք չէր յանդգնում մեզ վիճակութիւննա
ընդհակառակը նրանք նոյնիսկ մեզ շատ լաւ վիճակում
էին, որ երբեմն ծիծաղ էր պատճառում: Օրինակ, մի ան-
գամ երբ ես ձեռնոցներս կորցրել էի, այն ժամանակ աւագին
ները երկու աղլուխ բերին, որպէսզի ձեռքերս փաթաթեման
նրանք չկեղադառնուեն...:

Մեղ հետ սովորաբար խօսում էր կապիտանը, երբեմն
յունարէն, երբեմն էլ թիւրքելէն: Միւս աւագակները մեզ առ
տենում էին միայն այն ժամանակ, երբ կապիտանը նրանց
մեզ մօտ էր ուղարկում: Մնացած ժամանակը նրանք մեզանից
պատուաբեր հեռաւորութեան վրայ էին գտնում...

Հնդհանրապէս մենք անասելի սարսափի մէջ էինք: Մենք աղօթում և լալիս էինք օր ու գիշեր: Տասներկու օրուայ ընթացքում մենք միայն մի քանի ժամ էինք ընել: Գիշերը մեծ մասամբ քնում էինք և եթէ հանգստանում էինք, չէինք համարձակում աչքերներս խփելու: Մենք սեղմուած նստում էինք իրար կողքի, աչքերս երկիւղից բացած և դողում էինք, երբ հեռուից որևէ ճայն էր դալիս: Ցերեկը երբեմն քնում էինք, բայց ոչ երկուսս միասին, այլ մէկը միշտ պէտք է հսկէր միւսի վրայ:

Տասներկու օրուայ ընթացքում մենք մնացինք միեւնոյն հագուստի, միեւնոյն սպիտակեղէնի, կօշիկների և գուլպաների մէջ: Մեր աղլումները այնպէս էին կեղաստուել կարծես թէ դրանք ածխի վոշում մէջ թաթախուած լինէին: Կարիքից սահպուած էինք ձեռքներս լուանսալ, այն ինչ մեր երեսը միշտ անլուայ էր մնում, իսկ մազերը ոչ սանրուած: Մենք կտրել էինք մեր ամբողջոյսը և կարծում էինք, որ անտառում կը մեռնենք երկիւղից, սովածութիւնից կամ թէ չէ աւազակների ձեռքով:

Մի անգամ մեզ սաստիկ վախեցրեց այն երկիւղը, իրը թէ զօրքերը մեզ հալածում են: Եթէ այդ լուրը ճշտուէր, այն ժամանակ աւազակները մեզ կը սպանէին, թէկ նրանք ընթհանրապէս արիւնածարաւ մարդկանց տպաւորութիւն չէին թողնում: Կապիտան Գեօրգին պատկառելի կերպարնքով, գեղեցիկ դէմքով, բարձրահասակ և երկար միրուքով մի մարդ էր: Նրա կրակու աչքերը արտայայտում էին քաջութիւն, եռանդ և մի որոշ բարութիւն: Նա իր հաւատարիմներին ճարպիկութամբ պատուէրներ էր տալիս և նրանց մէջ տիրում էր մի տեսակ օրինակելի կարդապահութիւն: Նրա իւրաքանչիւր խօսքը աստուածային պատուէրի տեղ էին ընդունում և որ իսկոյն և եթ կատարում էր: Աւազակներն էլ արժանի էին մի այդպիսի առաջնորդի: Նրանք էլ վիթխարի կերպարնք ունէին և 30—50 տարեկան տղամարդիկ էին...

Հետաքրքիրը այն էր, որ աւազակները իրանց հետ ունէին մի ամբողջ գեղատում.. կապիտանը միեւնոյն ժամանակ և խմբի բժիշկն էր: Նա երեխն սրան և երեխն էլ նրան տալիս էր կամ փոշիներ կամ կաթիլներ: Ինքն էլ երեխն դեղ էր ընդունում: Որովհետեւ երեք օր շարունակ անձրեւ էր եկել, դրա համար կապիտանը պատուիրեց գեղերի արկղը բաց անել, որպէսզի արեւի ճառագայթները նրան մէջ մտնեն և նրանց խոնաւութիւնը ծծեն: Արկղը բաց անելուց յետոյ միայն մենք տեսաք, որ նրա մէջ գեղերի մի մեծ ժողովածու էր ամփոփուած,

ի միջի այլոց և մորֆիում, Դարմշտադի մի դեղավաճառանոցի էտիկէտով...

Զոռոանամ աւելացնելու, որ այդքան երկար ժամանակի ընթացքում մենք մեր իրերից ոչինչ չկորցրինք: Մի օր ես կորցրի ձեռքի պայուսակս, որի մէջ ամփոփուած էին փողամանս և մի գարդ: աւազակներից մէկը գտաւ և բերաւ ինձ յանձնեց պայուսակը, որից մի պիստոր անգամ չէր կորել...

Վերջապէս հասաւ մեր ազատութան ժամը: Եկար բանակցութիւններից յետոյ աւազակները մեր փրկանքի 25,000 ֆունտը 10,000-ի էին իջիցրել. սուլթանը վճարեց այդ գումարը մեզ փրկելու: Գումարը յանձնեց իմ հաւատարմատարս աւազակներից մէկին, մի առանձնցած տեղ, 24 ժամից յետոյ աւազակը վերադարձաւ այդ գումարով մեզ մօտ:

Կապիտանը իսկոյն և եթ զբաղուեց գումարը իր ընկերներին բամնելով: Գումարի $\frac{1}{4}$ մասը կամ 2,500 ֆունտը ինքը վերցրեց, իսկ մնացածը հաւասարապէս բաժանեց իր ընկերներին, այնպէս որ նրանցից ամես մէկը ստացաւ 750 ֆունտ: Դրանից յետոյ կապիտանը մօտեցաւ մեզ, ներողութիւն ինսդրեց, որ մեզ այդքան անհաճելի գրութեան մէջ գրեց, չնորհակալութիւն յայտնեց մեր համբերութեան համար և վերջապէս վերին աստիճանի քաղաքավարութեամբ համբուրեց մեր ձեռքը: Նրա օրինակին հետեւցին և միւս աւազակները, որոնք նոյնպէս չնորակալութիւն արին և համբուրեցին մեր ձեռքերը:

Դրանից յետոյ կապիտանը յայտնեց, որ մենք կրկին ազատ ենք, հրաժեշտ տուեց մեզ և իր մարդկանցից հինգ հոգի վերցնելով մեզանցից բաժանուեցաւ:

Միւս հինգ հոգին կապիտանի պատուէրի համաձայն մեզ պէտք է մինչև տուն ուղեկցէին:

Մենք սկսեցինք վերադարնալ:

Երեկոյ էր: Սկզբում չորս ժամ ձիով գնացինք, յետոյ իջանք ձիիրից և 14 ժամ շարունակ ոտով գնացինք: Աւազակները իրանց հագուստները մեզ էին տուել հազնելու մեր հագուստների վրայով, այնպէս որ կասկածու աչքերն անգամ չէին կարող նկատել, որ մենք կանայք ենք. այնքան էինք փոխուել մենք: Եթէ մէկը ճանապարհին պատահէր, նրա մըտքով ոչ մի բան չէր կարող անցնել...

Մեր խումբը հետզհետէ փոքրանում էր, որքան մենք մեր նպատակին աւելի էինք մօտենում: Սկզբում մեզ ուղեկցում էին հինգ հոգի: Մի քանի ժամից յետոյ նրանցից մէկը հրաժեշտ տուեց մեզ և ձիաների հետ յետ դարձաւ, որից յետոյ մեզ հետ միայն չորս հոգի մնացին: Գիշերուայ ընթացքում նրանցից

Երկուսն էլ անյայտացան, իսկ լուսադէմին էլ մէկը. Կարճ ժամանակից յետոյ մեղ հրաժեշտ տուեց և վերջին աւազակը ասելով:

«Ահա ձեզ եալովա տանող ճանապարհը:»

Այս ասելուց յետոյ մեղանից հեռացաւ միակ աւազակը: Մէնք մենակ շարունակեցինք մեր ճանապարհը և շուտով հասանք տուն...»

Աւելացնեմ և այս, որ վերջին աւազակը մեղանից ազատուելով, իջաւ սոտիկայ հովիտը այստեղից ոչխար գողանալու: Բարեբաղաբար նրան բոնեցին և նրա մօտ գտան իր բաժին փրկանքի 750 ֆունտը:

Թիւրքիական սոտիկանութիւնը շատ աշխատեց միւս աւազակներին էլ բանելու: Նշանակեցին մի խումբ զօրք աւազակների յետեկից ընկնելու և նրանց բանելու: Նոյնիսկ նաւապետ Մումթաղ բէյի զեկավարութեամբ Մարմարա ծովում մի քանի նաւեր պատրաստեցին աւազակներին հետեւելու: Գրեթէ ամեն օր մայրաքաղաքի թերթերը ամեն տեսակ լուրեր էին հրատարակում նորանոր աւազակների ձերբակալման մասին: Մէնք գիտենք, որ 11 աւազակներից միայն մէկին էին կարողացել բոնել: Պաշտօնապէս ձերբակալուած աւազակների թիւը հասնում էր 30-40-ի: Իսկապէս թերթերի այդ հաղորդած լուրերը մեծ մասամբ ստայօդ էին, ոչ մի աւազակ էլ բացի մէկից չձերբակալուեցաւ և, հաւանական է, որ մինչեւ այժմ էլ կապիտան Գեօրգին որեւէ տեղ ազատ կերպով վայլում է իր ոճագրութեան պառուղները:

Այստեղ հարկաւոր է մի հետաքրքիր բան էլ յիշել, որ բոլորին ամբողջացնուած է Գեօրգիի գործունէութեան բուժական գոյնը: Տիկին Բանոցյի և օրիորդ Պարագեմինեանին առեւանգելուց մի քանի օր առաջ, կապիտան Գեօրգին վախցրել էր եալովայում ապրող վառարանների գործարանատիրոջ որդուն: Արդ երիտասարդի համար կապիտան Գեօրգին պահանջեց 1000 ֆունտ փրկանք: Բայց նրա խեղճ հայրը ընդամենը 500 ֆունտ կարողութիւն ունէր: Մեր աւազակապետը բաւականացաւ այդ գումարով և երիտասարդին ուղարկեց տուն: Բայց երբ Գեօրգին արդէն երկու տիկիններից փրկանքի մեծ գումարը ստացել էր, եալովայի վառարանների գործարանատիրոջ յետուղարկեց, 500 ֆունտը հետեւեալ նամակի հետ միասին: «Այժմ ես կարող եմ ձեր ինձ տուած 500 ֆ. պարտքը վերադառնել: Գեօրգի:»

Ալբանիայում և Մակեդոնիայում աւազակները երկրի իսկական տէրերն են: Բնակիչները աւելի շուտ նրանց հետ են

բանակցութիւն սկսում, բան թէ թիւրքիական թոյլ և կամագուրի պաշտօնեաների պաշտպանութեանը դիմում: Ոստիկանութիւնը վերոյիշեալ երկրներում աւելի վասնգաւոր է, քան թէ Թիւրքիայում: Այստեղ ոստիկանութեան մարդիկ մեծ մասսամբ նախկին աւազակներից են բաղկացած, որոնք աշխատում են լաւ յարաբերութիւն պահպանել իրանց յաջորդ արհեստակցների հետ, և նոյնիսկ այդ ոստիկաններից շատերը նրանց հետ շատ անգամ պայմանաւորուած են լինում: Իսկ եթէ այդ ոստիկանները և ժամանակները կառավարութեան պատուէրով ստիպուած են լինում աւազակներին հետեւելու, այն ժամանակ նրանք առաջուց գաղտնի կերպով տեղեկութիւն են տալիս նրանց զգուշանալու: Զէ որ սովորաբար յայտնի են խմբերի աւազակապետները, նրանց ստորագրեանները, բնակութեան տեղերը, և նոյնիսկ նրանց գործականները զանազան քաղաքներում: Այդ աւազակները տէրութեան մէջ մի փոքրիկ տէրութիւն են կազմում, ունեն իրանց ամբողջ և կանոնաւոր վարչութիւնը և նոյնիսկ իրանց պաշտօնական ներկայացուցիչները թիւրքական պաշտօնեաների մօտ:

Իբրեւ մի պատկեր Թիւրքիայի աւազակների կեանքին նուիրուած գլխին, ուղում եմ հետեւեալ անամօթ լուրերն էլ աւելացնել, որոնք թիւրքական կառավարութիւնը գրեթէ ամեն օր թիւրքական լրագրների պաշտօնական լուրերի շարքում հաղորդում է:

«Մոնաստիրից մեղ հաղորդում են որ Մեղքիկույում Սերֆիտշէ սանջակում մեծ ընդհարում է տեղի ունեցել ժանդարմների և աւազակների մէջ: Զնայելով որ վերջիններս թուով քիչ էին, սակայն միաներկարատեկութիւնը յետոյ ժանդարմներին յաջողուեց աւազակապետ Ալէքսիսին սպանելու, միւս աւազակները կորցրին Յ մարդոց:»

«Տարիներից ի վեր Եանինայում և Մոնաստիրում տիրապետող աւազակապետ Թուխան Պրունուբաբայի խաներից մէկում քնած ժամանակ մատնուեցաւ և ընկաւ ժանդարմների ձեռքը: Վերջիններս կարողացան նրան կենդանի բոնել: Աւազակապետին սպանեցին և նրա գլուխը բերին Գիւրիւտչէ:»

«Կոսովո գաւառի Պրիսրինդ գիւղաքաղաքում ժողովրդի մէջ մեծ իրարանցում է ձգել աւազակային մի խումբ: Այն խըմբը, որոնք ուղարկուել էին այդ խմերն բոնելու, չկարողացան իրանց նպատակին հասնել, թէև նրանց հետքը արդէն գտել են:»

Նորագոյն ժամանակներս գրգռիչ ոչպահեր պատահեցին Թիւրքիայի մի քանի տէրերում: Զմիւնիայի շրջակայրում ա-

Հազակները փախցրին Միյ անունով՝ Փլանսիացում, որին արձակեցին 5000 գունտ փրկանք առնելուց յետոյ: Մակեդոնական աւազակները Սալոնիկէի պարիսպների տակ առևանգեցին ամերիկան միասինսարուհի միտ էլլէն Ստոնին և նրա համար պահանջեցին 25,000 գունտ փրկանքի փող, կամ քաղաքական ներումն Սալոնիկում յեղափոխական գործերի պատճառով տէրութիւնից դատապարտուած մակեդոնացիների համար....

Այդ օրինակ դէպքեր Փոքր-Ասիայում էլ շատ են պատահում:

Լսենք դրանց մասին էլ կրկին թիւրքիական տեղեկութիւնները:

«Թոկատում երևացել է աւազակային մի խումբ: Ռստիկա-

նութիւնը ընդհարուեց այդ խմբի հետ և սպանեց երկու աւա-

զակները: Միւսները կարողացան փախչել և աղմուկներ բարձ-

րացնել բաղաքի շրջակայքի միւս մասերում: Սըլվագի և կոնի-

այի վալիները պայմանաւորուել են միմեանց հետ և մեծ խըմ-

բեր են ուղարկել աւազակներին հալածերու և ոչնչացնելու»:

«Կ. Պոլսի մօտ Իզմիտում աւազակների մի փոքրիկ խումբ

է երևացել: Քաղաքի պարիսպների մօտ հինգ աւազակներ յափ-

շտակեցին քաղաքագլուխ էմին էֆինտիի երկու որդիներին,

եղբօրը և 68 ոսկէ լիրա և պահանջեցին մեծ փրկանք: Եւ որով-

հետև նրանք սարերը փախցրած մարդկանց սպանում էին

սպանելու, դրա համար էլ փրկանքը իսկոյն և եթ վճարուեց

նրանց»:

«Աւազակների մի խումը իշխում է կարամուսալում, որ նոյնպէս իզմիտի գաւառումն է գտնուում, ամեն տեսակ ջանք է գործ դրւում այդ աւազակներին ոչնչացնելու: Հինգ հոգուց բաղկացած աւազակների մի խումը բացարձակ կերպով տիրում է Սինոպի և Գարասուի մէջ ընկնող ճանապարհի վրայ: Այդ խումը արդէն բազմաթիւ ճանապարհորդների կողոպտել է: Երբ այդ աւազակներին չեն դիմադրում, նրանք բաւականա-նում են միմիայն փրկանքի փողով: Զակառակ դէպքում նրանք սոյնիսկ սպանութիւններից չեն խուսափում ճանապարհորդ-ների իրեղէններին տիրանալու: Օրինակի համար նորերս մի երիտասարդ վաճառական եազիտի օղի Ստավրի անունով աւազակներին իր ցոյց տուած դիմադրութեան համար կորցրեց ոչ միայն իր իրերը, փողը այլ և կեանքը: Ներկայումս Սինո-պի նահանգապետը Բէքիր-Փաշան զօրք է ուղարկել այդ աւա-զակներին ոչնչացնելու համար»:

Աւազակներին արմատախիլ անել առ այժմ անհնարին է, որովհետև դրանք ունեն բազմաթիւ բներ, որտեղ նրանք վտան-գաւոր բոպէններին կարողանում են ճարպիկութեամբ թագնուել: Այդ բներից նրանք երբեմն առ երբեմն դուրս են գալիս և աշ-

խարհն զարմացնում իրանց յանդուգն գործերով: Դա 5 կամ 10 հոգուց բաղկացած մի խումք է, որ տասնեակ հազարաւոր բնակչիչ ունեցող քաղաքներին սարսափի մէջ է ձգել:

Կ. Պոլսի և Սալոնիկէի մէջ զանուղու երկաթուղու կայարան-ներից մէկում օր ու ցերեկով Պրեվո ազգանունով փրանսիացի ինժեները աւազակներից կողոպտուեց և 50,000 փրանկ փրկան-քի փող վճարելուց յետոյ միայն ազատուեցաւ: Այնուհետև աւազակները հանգիստ կերպով յետ քաշուեցան:

Աղաբաղարի երկաթուղու կայարանում 12 հոգուց բաղ-կացած աւազակների մի խումք գիշեր ժամանակ յարձակուեցաւ զինուորների վրայ և փախցրեց նրանց սպային և որովհետև կառավարութիւնը նրան որոշ ժամանակի ընթացքում չկարո-ղացաւ ազատել, դրա համար աւազակները սպանեցին նրան: Աւազակներից ոչ որ չըստուեց:

Անտառիական երկաթուղու մի ուրիշ կայարանում՝ Աղ Քայիայում, մի քանի ժամանակ սրանից, առաջ, օր ու ցերեկով աւազակային մի ուրիշ խումք յայտնուեցաւ: Այդ խումքը քա-րութանդ արեց կայարանի շինութիւնը, ոչնչացրեց նրա զանա-զան բաժանմունքները և երկաթուղու գծերը և յետոյ կայա-րանի գանձարանը կողոպտեց: Մինչև աւազակներից շղթա-յուած պաշտօնեանների օգնութիւն ստանալը, չարագործները փախան դէպի լեռները, որոնք աւազակներին հետևող մարդ-կանց համար անյաղթելի արգելքներ էին ներկայացնում: Էս-կիշէնիրի գայմագում կամ նահանգապետ Հայիրի-Բէլը չնա-յելով այդ արգելքներին իր զինուորների խմբով շրջապատեց աւազակներին, բայց վերջիններին կրկին յաջողուեց նրանցից աղատուելու:

Տէրութեան պաշտօնեանները մի պատահմունքի շնորհիւ միայն կարողացան աւազակների հետքը գտնել:

Էսկիշէնիրի բազմարում մի անգամ մի հովիւ զէս ու զէն էր զնում վառոդ զնդակ զնելու: Այդ հովուին կասկածելով ձերբակալեցին և նրան սաստիկ նեղացնելուց յետոյ վերջապէս յայտնի եղաւ, որ նա այդ վառօճն ու զնդակը հալածուած աւա-զակների համար էր ցանկանում զնել: Վերջիններիս մատնելուց յետոյ, երբ հովիւը տեսաւ որ իրան էլ սպանում է մահ, սատիպուած եղաւ ոստիկանութեան նոյնիսկ աւազակների տեղը ցոյց տալու: Հովիւը թիւրքիական զինուորներին ամենա-սարսափելի ճանապարհորդով տարաւ մինչև աւազակների որջերը:

Քիչ ժամանակից յետոյ հալածուած աւազակները կան-գնած էին իրանց հալածող զինուորների դէմ առ դէմ: Աւազակ-

ների թիւը անհամեմատ աւելի քիչ լինելով՝ չկարողացան զի՞նուորներին ցանկալի դիմագրութիւնը ցոյց տալ: Դրանց մեծ մասը փախաւ, իսկ երեք աւազակներ ծանր կերպով վիրառուելով վերջապէս անձնատուր եղան զինուորներին: Այդ երեքը Անսատոլիայի ամենայայտնի և վատահամբաւ գողերը, մարդասպաններն և աւազակներն էին, այն է Հարունը, Սորունքոր և Մեհմեդ փեհլիվանը: Վերջինս, ինչպէս ինքը հապարտութեամբ խոստովանում էր, բացի իր սովորական աւազակութիւններից մօտ 300 մարդ էլ էր սպանել: Եւ գիտէք ինչ արին վերոյիշեալ երեք աւազակներին: Դրանցից առաջին երկուը երկաթուղու գծի վրայ պահապահներ նշանակուեցան.... իսկ Մեհմեդ փեհլիվանը դաւաւ ոստիկանական բարձր պաշտօնեայ, աւելի ճիշտը ոստիկանութեան նախարար Նազիմ փաշայի առաջին խորհըրդականը: Վերջինիս մօտ ես յաճախ եմ տեսել Մեհմեդ փեհլիվանին իր անցեալ քաջազրութիւնների մասին պատմելիս: Նազիմ փաշայի անկումից յետոյ, ինչպէս որ ես արդէն պատմեցի գրքիս «ԿաՊօլսի բանտերը» վերնագրով գլխում, Մեհմեդ փեհլիվանը նշանակուեց Պերայի նահանգապահետ Էնվեր-բէյի գլխաւոր խորհըրդականը....

Նոյն մի պատահմունքի շնորհիւ բռնուեցան այն աւազակները, որոնք չորս տարուց ի վեր 50,000 բնակիչ ունեցող Քութահիա քաղաքը իր շրջակայրով անապահով գրութեան մէջ էին դրել: Այդ աւազակները դրեթէ ամեն օր վերոյիշեալ քաղաքի պարիսաների մօտ սոտիկանութեան պաշտօնեաների քթի տակ բաւականաչափ մարդ էին սպանում:

Ոստիկանների մի խումբ դարանակալած լրտեսում էր նրանց: Շուտով այդ բանը իմացան աւազակները, որոնք յանկարձակի յարձակուելով ոստիկանների վրայ նրանց ահ ու սարսափի մէջ ձգեցին: Ոստիկաններից երկուսը փախան, բայց մի քանի լրովէից յետոյ աւազակները բռնեցրն նրանցից հինգ հոգու և շղթայակապ արին: Ցուսո և Զաքարիա աւազակները զրացուած էին իրանց սիրելի ոստիկանների գրպանները գատարկելով, իսկ մնացածները աշխատում էին բռնել փախանող ոստիկաններին: Այդ ժամանակ մի երկձի կառքի մէջ նոտած մօտենում էր Կոսիայի ոստիկանապետ Իբրահիմ բէյը, որին միայն մէկ ժամանակ էր ուղեկցում: Ոստիկանների գըրպանները դատարկող աւազակները այնպէս էին խորասուզուել իրանց հաճելի աշխատութեան մէջ, որ չնկատեցին իրանց մօտեցող Իբրահիմ բէյին: Վերջինս և իրան ուղեկցող ժամանակը իսկույն իրանցին աշխատութեան մէջ:

լրովէից յետոյ գետին գլորեցին Ցուսոյին և Զաքարիային.....

Մի տարուց իվեր թիւրքիայում մացնուելիք մեծ ըեփորմը բոլոր ցեղերի և կրօնների հաւասարութիւնը, առ այժմ իրականացել է միայն աւազակութեան մէջ:

Աւազակութեամբ պարապում են և մահմեդականները, և յոյները, և բրդերը, և հայերը: Այդ արհեստով նրանք բոլորն էլ միարան գործում են:

Անսատոլիական ամենանշանաւոր վիլայէթներից մէկում՝ Սըվազում՝ աւելի քան տասը տարից իվեր տիրում էր մահմեդականացած քրդերից բաղկացած աւազակային մի խումբ, որի նշանաւոր առաջնորդը Սիմէօն Թէրզիօղլի անունով հայն էր: Վերջինս ոչ միային բաւականանում էր խորամանկութեամբ աւազակութիւններ անելով, այլ և յաճախ իր 12 հոգուց բաղկացած խմբով օրու ցեղեկով յարձակում, յափշտակում, սպանում, այրում էր մեծ քաղաքներից և աւաններից շասերը: Շատ զարմանալի է դրութիւնը Եմէնում:

Թացի սանջակի մի հին ամրոցի աւերակներում բռնն էին գրեկամօտ 60 աւազակներ: Այդտեղից նրանք բոլորովին համարձակ ու յանդուզն կերպով յարձակումներ էին գործում շրջականինի վրայ և այնտեղի ազգաբնակութեանը այնպիսի սարսափիցու միջ ու գողի մէջ էին ձգել, որ վերջինս աւազակներին ձեռականացուը էր վարդապէտի ուղարկեց այդ աւազակներին բռնելու: Յետոյ տակն էնչպատղագուեցաւ: Եթէ թիւրքիական վաշտերին յաջողութիւն պահպանակերին յաղթելու, այն ժամանակ պաշտօնական լուրերը այդ բանը անպատճառ կը հաղորդէին: Ուղեմն ոկտրէ Ենդունեցն անաւազակների վերոյիշեալ տիրապետութիւնը մինչդեռ պյունիկ իր գոյութիւնը շարունակում է: Նոյնու թիւրքիայում զեռ աւելի ընդարձակ առաջնորդութիւնը կամ անդամանութիւնը միայն անդամանութիւնը է:

Անսատոլիա գագաթաւորի Զաքարիա փոքրիկ քաղաքում, որ կ. Պղղումբարքիաթաղպատիկերեք ժամ ենուաւորութեան վրայ է գտնուում, անդամանութիւններին անունով մի այրի կիս: Սըւանից 9 տարի առաջ անյայտացաւ նրա 11-ամեայ միակ որդի Ստաւրօն նրան միակ նորմանութիւննը Պժերաղդ այրին ամեն միջոցների դիմեց փրակութանդրուն չսիրելու: Գիշեր ու ցեղեկ նա հանգացութիւններնէր, խոյցաւ վնասարոյին նրա սիրած որդու հետքընանցած չնունեցնելու մանմթիթար մայրը ստիպուծ էր իր ձականագրին և միթոքուակցաւ մենագր ապրել... Անսատոլիա միայնաւալու 9 տարին լրացաւ:



Մի երեկոյ դժբաղդ մայրը նստած էր տիսուր, ինչպէտ միշտ և դէպի հեռուն էր նայում:

Ամեն ինչ խաղաղ էր նրա շուրջը: Տան մէջ չէր լսում նոյնիսկ ճանձի տպոցը: Ամեն ինչ ճաճէլի և խաղաղ էր այսու համար: Փողի կարիք նա չէր զգում, որովհետև ինը մենակ էր, իսկ նա աւելի ունէր, քան թէ կարիք կար, Բայց միթէ դրանք կարող էին շաւակնութիւն պատճառել որդեկորոյն մօըը: Ի՞նչքան հրաշալի և գեղեցիկ բան կը լինէր, եթէ Ստաւրօն իր մօր կեանքի վերջին տարիներում նրա մօտ լինէր:

Մի անգամ նա նկատում է որ ճանապարհով երկու մարդ են գալիս, մէկ ծեր, իսկ միւսը երիտասարդ. երիտասարդը մնում է դրսում կանգնած, իսկ ծերունին ներս է մտնում այրի կնոջ մօտ:

«Ո՞վ ես դու, հարցնում է այրին»:

—Ես մի աւազակ եմ, այսպէս է սկսում իր պատմութիւնը հիւրը: Ինը տարի սրանից առաջ՝ ես գողացի միակ որդուդ Ստաւրօնին: Եթէ փրկանք վճարես, կարող ես նրան կրկին ստանալ:

Այրին գողգոջուն ձեռքերով վճարեց փրկանքը, որից յետոյ աւազակը հեռացաւ, իսկ Ստաւրօն վերադաշտաւ:

Մեր Ստաւրօն իր ընտանիքին նոր կեանք է տալիս: Այժմ այրու տունը ուրախ և ցնծում է, այն ինչ առաջ միայն տրխութիւն և սուգ էր ներկայացնում: Ստաւրօն զանազան առիթներից օգուտ քաղելով իր մօրից նորանոր փողեր է խընդրում: Այրի մայրն էլ առանց մերժելու միշտ կատարում է իր որդու ինպիրը: Եւ միթէ մօր մաքով կ'անցնէր իր միակ որդու ինստիրը մերժելու...

Այդպէս նրանք ապրում են շաբաթներ և ամիսներ...

Յանկարծ, մի օր, Ստաւրօն խոստովանւում է, որ ինքը աւազակային խմբի հետ դեռ ևս յարաբերութեան մէջ է գտընւում, և բացի դրանից, որ իր բոլոր ընկերները և հիւրերը աւազակներ են: Միայն փողի շնորհիւ նա կարող էր իր վտանգաւոր ընկերներից ազատուել: Մայրը տալիս է որդուն իր վերջին փողը և այդպիսով տանը միաժամանակ խաղաղութիւն և հանգստութիւ է տիրում:

Մի անգամ էլ Ստաւրօն յանկարծ կանգնում է իր մօր առաջ և ասում է. «Փող տուր, եթէ ոչ կը սպանեմ քեզ»:

—Ես այլ ևս փող չունիմ, գանգատում է դժբաղդ մայրը:

«Իոկ ես կամ պէտք է փող ունենամ, կամ թէ չէ կը սպանեմ քեզ: Ծախիր տունդ և զրա փողը տուր ինձ: Ես պէտք է վերազանամ աւազակների մօտ»: Ստաւրօն քանի գնում, այնքան էլ աւելի էր սպանում մօրը:

—Դժբաղդ որդիս, եկ ինձ հետ գնանք մայրաքաղաք, այնտեղ էլ ես փող ունեմ, պատասխանում է վերջապէս մայրը: Եւ նրանք միասին ճանապարհուում են Կ. Պոլիս:

Բայց Ստամբուլում յուսնատուած մայրը իր թշուառ որդուն փոխանակ բանկիրի մօտ՝ տանում է ոստիկանութեաննասարարի մօտ:

Ոստիկանութեան նախարարի մօտ ես Ստաւրօնին տեսայի բրու փաշայի թիկնապահ ծառայ...

Դ.

Թիւրքիական ցենզուրան.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զափազանց կրթութիւնը: —Թիւրքիական լրագիրները: —Ճենդուրական դէպքերի նմուներ: —Ռւզանց Աստուածաշունչը: —Սըբագրուած Ղուրանը: Դիժկովը: —Քաղաքականութիւնը մամուլի մէջ:

Ինչպիսի կրթութիւն, ինչպիսի յառաջադիմութիւն:

Այդպէս էի ես կարծում, երբ տեսնում էի շոգենաւի վրայ նստած արխստոկրատ թիւրքերին, որոնք գնում էին դէպի վիլաները և Մարմարա ծովի ամարանոցները և ճանապարհի երկարութիւնը չգգալու համար եւրոպական լրագրների ընթերցանութեամբ էին զբաղուած:

Զափազանց կրթութիւն, չափազանց յառաջադիմութիւն, կարծում էին ընդհակառակը թիւրքական լրտեսները և եւրոպական լրագրներ կարգացողներին ամբաստնում էին իբրև երիտասարդ թիւրքերի:

Եւ զարմանալի չէ այն հանգամանքը, որ թիւրքիական կատավարութիւնը կատարելապէս գնահատում է այդ օրինակ ամբաստնութիւնները, որովհետև նրա պաշտպան ոստիկանութիւնը այնպիսի անհամաների, իբրև երիտասարդ թիւրքերի, կալանաւորեց, որոնք horrabile dietu ոճրագործութիւն են արել նրանով, ու իրանց ֆէսերի վրայ օդանցքներ են ունեցել:

Օդանցքները երիտասարդ թիւրքերի նշաններն են, ասում է ոստիկանութիւնը...

Եւ իհարկէ այդ օրուանից ի վեր զրեթէ ամեն մի թիւրք իր փէսի վրայ օդանցքներ չունի, կամ թէ չէ բացի Կ. Պոլսի զրաքննիչի ատեանից անցկացած թիւրքիական լրագրից ուրիշ լրագիր չէ կարդում հրապարակօրէս:

Եւ ինկապէս կ. Պոլսի ոչ մի լրագիր չէ կարող իր ընթերցողի մտքերը լարել կամ վոխել:

Եւ միթէ կարելի է մի բան աշխարհիս երեսին աւելի տափակ, չոր ու ցամաք և ձանձրալի երևակայել, քան թէ այդ կ. Պոլսի լրագրսերն են ներկայացնում:

Թիւրբիական թերթերի ամենազուարձալի մասը կազմում են նրանց պաշտօնական բաժինը և այն սինակները, որտեղ գլխաւորապէս երեսում են թիւրքական ցենզուրայի լարախաղացութեան բնորոշ նմուշները.

Թիւրբիայում գրաքննուութիւնը զարմանալի կեանը է վարում: Թիւրբիական թերթերը զրկուած են նոյն իսկ ամենաչընչին պատութիւնից ներքին կամ արտաքին քաղաքականութեան մասին անկախ կերպով իրանց կարծիքները արտայայտելու: Դրանք մեծ մասամբ գրաքննութիւնից ներշնչուած յօդուածներով են կերպակում իրանց ընթերցողներին:

Շատ անգամ էլ պատահում է, որ թիւրբիական ցենզուրան շատ բան թոյլ է տալիս տպագրելու թիւրբիական լեզուով լոյս տեսնող թերթերում, այն ինչ միեւնոյն բանը արգելում է մայրաքաղաքում լոյս տեսնող միւս թերթերում երևալու, որպէսզի զրանով արգելի միայն թիւրբիրի համար որոշած տեղեկութիւնները տեսլի լայն շրջաններում տարածուելու:

Թիւրբիրի համար լուրերը առհասարկ ուրիշ գոյն ունեն, եւրոպացիների համար ուրիշ:

Մի բանի մէջ միայն բարորը միեւնոյն իրաւունքն ունեն, որ է լուսթիւնը: Միանգամայն անհաւատալի է թիւրբիական ցենզուրի նրբազգացութիւնը և դիսկրետ լինելը:

Ահա միայն մի բանի պերճախօս փաստեր:

Երբ Կարնօն սպանուել էր, լուրը կայծակի արագութեամբ բերանացի կերպով տարածուեց և չնայած նրան, որ իւրաքանչիւրը այդ մասին արգելն զիտէր և խօսում էր, կ. Պոլսի թերթերին արգելուած մնաց այդ սարսափելի դէպքի առթիւ ամենաշնչին մանրամասնութիւնը անգամ յիշատակելու:

«Թրանքիական հասարակալիտետթեան նախագահը հանկարծամահ եղաւ» այսպէս հազորդուեց փարիզեան լուրը: Յետոյ կարողացան, իհարկէ, նրա մահուան մասին մի քանի բան ևս պատմելու, բայց միայն այս ձեռվ:

«Կարնօն դէպքից յետոյ զիտակցութիւնը կորցրեց և կառը ուում պառկեց: Սրան յետեկող նախադասութիւնը «Նրա բերանից վագում էր արիւն» գրաքննիչի փափուկ զկացմունքները շարժեցին:

Պրեֆեկտ Ռիվոի խօսերը ուղղուած թատրոնական հիւ-

բերին Լիօնոմ, թէ «մի բղաւէք կարնօն զոհ եղաւ մի ատենատատի»; ստիպուած էին այս ձեռվ հազորդելու:

«Մի բղաւէք կարնօն մահամերձ է...»

Այս բոլորի հետ, սակայն, եւրոպական թերթերը բացարձակ կերպով կախուած էին, կատարուած ոճրագործութեան վերաբերեալ իրանց մանրամասն տեղեկութիւններով, բոլոր հիւրանոցներում և սրճարաններում:

Մի իրեկոյ մի հեռագիր կարգացի ևս հետևեալ բովանդակութեամբ:

«Գետական բոլոր բարձր աստիճանաւորները շտագեցին Հումբերտ թագաւորին իրանց համակրութիւնները արտայայտելու»:

Մի քանի օրից յետոյ, սակայն, կարգացի ևս եւրոպական թերթերում Ալիքարիտօյի կատարած անյաջող ատենատատի մասին:

Մի ուրիշ անգամ հաղորդում էր Մագուիդից. «Խսպանիայի ամբողջ ազգաբնակութիւնը խորապէս յուզուած է մինիստր նախագահ կանօվայի մահուան առթիւ»: Բայց ևս իսկոյն հասկացայ թէ այդ ինչ է նշանակուած:

Սամբուլօվի սպանման ժամանակ արգելուած էր նրա ոչ միայն մահուան, այլ և նոյն իսկ նրա ծանը և անյուսալի հիւնդութեան մասին որևէ բան խօսելու, որից յետոյ մահը ընականաբար պիտի տեղի ունենար:

Մամուլացին սոյն օրինակ կատակերկութիւններ տեղի ունեցան Յունաստանի Գէորգ թագաւորի կեանքի դէմ սպանման փորձ անելու ասիթով. նոյնը պատահեց և Աւստրօ-Ռւնդագարիտէթ կայսրունու, Իտալիայի Հումբերտ թագաւորիտիւնը և Միացեալ նահանգների նախագահ Մակ-Կինլէի սպանուելու ասիթով:

Հայկական խոռվութիւնների ժամանակ պատահած ցենզուրական ծիծաղաշարժ նմուշների մասին խօսելը մեզ շատ հեռու կտանէր:

Թառւցիկ կերպով աւելորդ չէ այստեղ յիշել որ թիւրբիական թերթերում արգելուած էր Գլասոստնի պատկերը հրատարակելու, որովհետև պետական այդ անձնաւորութիւնը թոյլ էր տուել իրան Սուլթանի և Թիւրբական լացասական թոյլ իսկ խօսելու: Բայց գրանից նաև արգելուեց, թիւրբիական լրագրներում որևէ բան յիշելու այն շոգենաւի կաթսայի պայթելու մասին, որ թիւրբական կառավարութիւնը շինել էր պայթելու մասին: Հայտնի թիւրբ ընթերցող-տուել Թիւրմանիայի Քիլ քաղաքում. չէ որ թիւրբ ընթերցող-

ները կարող էին այդ կաթսայի պայթելը ուրիշ ենթադրութիւններով պարզաբանել:

Հայկական կոտորածներից յետոյ թիւրքիական ցենզուրան սկսեց իր բարբարոս արշաւանքները հայերէն լեզուով լոյս տեսած գրքերի և պարբերական հրատարակութիւնների վերաբերմամբ. նա եռանգուս կերպով խուզարկում և մրոտում էր հայերէն լեզուով այն բոլոր հրատարակութիւնները, որոնց մէջ, աչք զարնող շատ նախադասութիւններ կային:

Նոյն իսկ Աստուածաշունչը ազատ չմնաց վերոյիշեալ արշաւանքներից: Թիւրքական գրաքննիչի աշքում նրա մի քանի նախադասութիւնները անվստահելի և կասկածելի դարձան:

Հրէաստանը նման է հնչում Հայաստան բառին, բայց որովհետեւ թիւրքիայի համար Հայաստան բառը գոյութիւն չունի, քերուած է բոլոր քարտէզների վրայից, դրա համար էլ արգելեցին յաւիտեանս Հայաստան բառի գործածութիւնը, որովհետեւ նա կարող է յիշեցնել նախկին Հայաստանը:

Ուրեմն այսուհետեւ այնպիսի Աստուածաշունչներ, որոնց մէջ չի կարելի գանել Հրէաստան բառը:

Միւս տեղը վերաբերում է Քրիստոսի համար առաջին անգամ մեռնող սուրբ Ստեփանոսին: Թիւրքական գրաքննիչը չկարողացաւ ներել այդ սուրբին, նա չէ, որ քարկոծուելով մեռաւ որը կարող է 1896 թ. Օդոստոսեան գէպշերը յիշեցնել, եթե այնչափ հայեր նոյն ձևով սպանուեցան, ուստի և այդ կտորը ջնջուեց:

Մի ցենզուրա, որ կարողանում է Դուրանից «Խալիֆայի պարտականութիւնների մասին» գլուխը ջնջել, ի հարկէ կարող է և Աստուածաշունչը սրբագրել:

Թիւրքական լրագրները իրանց խորամանկութեամբ ստիպուած են երբեմն իրանց միտքը տպագրական սխալների շնորհու արտայայտել: Եթե Սուլթանի առաջին քարտուղար Սուրէա փաշան յանկարծակի մեռել էր և լուր էր տարածուել, որ նա թունաւորուել է, կ. Պոլսի գերմանիերէն լեզուով հրատարակուող մի թերթում տպուած էր հետեւեալ... Սուրէա փաշան յանկարծաման եղաւ մի թիւրքական (türkisch) հիւանդութեան շնորհիւ, փոխանակ ասելու խարդախ (tückisch) հիւանդութիւնից...»

Եթե յայտնի ծովային մինիստր Հասան փաշան մի թանգարին պատուոյ սուր ստացաւ, քրանսիական մի թերթ դիտմամբ հետեւեալ տպից. «sabre de grande valeur» (փոխանակ վալուական ասելու խարդախ (tückisch) հիւանդութիւնից...»

Այգափիսի տպագրական սխալները» պատճառ դարձան վերջապէս ցենզուրական մի հրովարտակի հրատարակութեան,

որի համաձայն խմբագիրները տպագրական սխալների համար անգամ պատասխանատու են դառնում:

Դրան հակառակ, ցենզուրան ոչ միայն թոյլ է տալիս, այլ և ցանկանում է, մանաւանդ քաղաքական յուզմունքների ժամանակ, որ ընթերցողների ուշադրութիւնը գրաւուի հետեւեալ լուրերով:

«Աւրասափելի պտղաբերութիւն». Կոնֆայում տեղի ունեցաւ կանացի պտղաբերութեան մի արտասովոր դէպք: Մի կին այդ քաղաքում ծնել է մինչև այսօր 24 երեխայ: Նա ամուսնացել է 12 տարեկան հասակում և այժմ չնայելով որ նա 49 տարեկան է սակայն 25 տարեկանի տպաւորութիւն է թողնում: Այդ 24 երեխաներից կենդանի են մնացել միայն 9 հոգի, այն ինչ մնացածները մեռել են իրանց փոքր հասակում, մեծ մասմբ ծնուելուց անմիջապէս յետոյ».

«Մի գիծ կով». Եթե Սըվազում սկսուեցին հայկական առաջին շարժումները, կ. Պոլսի թերթերից մէկը իր այստեղի թղթակցից ստացաւ հետեւեալը. «Առանձին մի բան չկայ հաղորդելու. նորերս մաքսատան պաշտօնեաները ձերբակալեցին ծխախոտի մի քանի մաքսանենդների. իբրև մի ծիծաղալարժ պատմութիւն աւելորդ չեմ համարում նաև ձեզ յայտնել, որ քաղաքումս մի կով է գժուել, որի պատճառով տեղիս ամբողջ աղղաբնակութիւնը յուզուած գրութեան մէջ է գտնւում»: Շատ պարզ է, որ ընթերցողը պէտք է կարողանայ այդ խօսքերը տողերի արանքներով կարգալ:

Յունական պատերազմից սկսած Թիւրքիայի պարբերական մամուլը աչքի ընկնող փոփոխութեան ենթարկուեց, որովհետեւ միայն այդ ժամանակ թիւրքիական թերթերը առաջին անգամ արտօնութիւն ստացան օգտուելու քաղաքական յայտարարութիւններից կամ կօմբինացիաներից: Այդ ժամանակ մանաւանդ մի՝ օրաթերթ՝ պատկերագրդ ամենօրեայ «Մալիւմաթ»ը, որ Ելդրզի օրգանն է համարւում, արտաքին քաղաքականութեան իր նույիրած գեղեցիկ և ազատ յօդուածներով, զրաւեց ընթերցողների ուշադրութիւնը: Այդտեղ անգիտացիներին էլ անում էին նոյն յանդիմանութիւնները՝ Հընդկաստանի մահմեդականների վերաբերմամբ, նրանց կատարած անգթութիւնների համար, ինչ որ անզիփացիները Թիւրքիային էին ուղղում հայերի նկատմամբ և պահանջում էր, որ «յանուն քաղաքակրթութեան խօսող պետութիւնները» յանուն քաղաքակրթութեան հնդկաստանի ճնշուած մահմեդականներին ազատեն:

Գետութիւնը թոյլ էր տալիս կ. Պոլսի թերթերի միջո-

ցով մասնաւորապէս, թիւրքերի համար ասհասարակ, այնպիսի լուրեր տարածել, որոնք դուրսը միայն ծիծաղ կարող են շարժել:

Այսպէս օրինակի համար «Սարահ»-ը հաղորդում է. «Ազմիւրաները խնդրեցին Զեւսդ փաշային կրետական գործը իր ձեռքը վերցնել և շուտափոյթ լուծում տալ»:

Սակայն սրան հակառակ, ժողովուրդը արդէն սովորած էր քաղաքականութեան մասին խօսելու և դատողութիւններ տալու շատերը արդէն սկսել էին եւրոպական լրագրներ կարդալ իրանց ծանօթութիւնները ընդարձակելու համար, շատերն էլ մեծ հետաքրքրութեամբ յետեւում էին ներքին քաղաքականութեան:

Բայց յանկարծ թնդաց ցենզուրայի «յետը», ինքվիզիցիայի որոտարառը, և ամեն ինչ ընկղմումէ հին ֆանատիկոսութեան մէջ ահով ու սարսափով:

Նոյն իսկ դուրսը ապահովութեան մէջ ապրող երիտասարդ թիւրքերը սրերը պատեանների մէջ դնելով և թափանով իրանցից բոլոր իդէանները, վերապարձան Փաղիշահի ոսկու ամանների շուրջը բոլորինու:

Ի վերջու յիշատակեմ և հետեւալ զէպքը, որ կարող է ապացուցանել թէ ցենզուրան որչափ լրջութեամբ է տանում իր դործը:

Մի գիշեր Պերայի գլխաւոր փողոցում զրօնում էին երկու գերմանացի պարոններ իրանց տիկինների հետ միասին, երբ մի շատ ճաշակով հագնուած թիւրք վրայ է գալիս և սկսում վերոյիշեալ չորս ճողուն մորակահարել. Սակայն մօտեկայ սըրճարանից մի քանի մարդիկ վրայ հասնելով, հացնում են սրիկային իր արժանի վարձատրութիւնը մի փառաւոր քոթակափ: Ոստիկանութիւնը այս զէպքի ժամանակ ներկայ չէր: «Levant Herald» լրագիրը զէպքը հաղորդելով աւելացնում է:

«Զի կարելի ասել թէ մեր ոստիկանութիւնը լաւ կազմակերպուած չէ: Ամեն յիսուն քայլի ամենայն ճշառութեամբ աշունաներ են նշանակուած, որոնք ցերեկները միշտ իրանց ծառայութեան մէջ են, սակայն գիշերները երբեմն վատ եղանակներին ու հանգիստ ժամանակներին որձարանների մէջ խաղաղ տնկիւն են որոնում, որից և ինչպէս ներկայ պատմութիւնը ցոյց է տալիս ոստիկանութիւնը յաճախ տուժում է:»

Չնայած զգուշութեամբ գործածուած այս բառերին «Levant Herald» ցենզուրայից խսկոյն մի խիստ յանդիմանութիւն ոտաշու: Յանդիմանութեան պատճէնը բերում են այստեղ թիւրքիան մամուլի բիւրօյի ծիծաղելի վիճակը ապագային որպէս յիշողութիւն թողնելու:

Դռն

Ներքին գործոց մինիստրութիւն. Օտարազգի մամուլի վարչութիւն. 28 յուլիսի 1896

«Levant Herald» ոչ մի ուշադրութիւն չի դարձնում ցենզուրական կանոնադրութեան վրայ, ուստի և յայտարարում է նրան, որ նա կենթարկուի այն պատիմներին, որոնք նշանակուած են ցենզուրական կանոնադրութեան նկատմամբ զանցառութիւն անողների համար:

Պետական խորհրդական և վերատեսուչ օտարազգի մամուլի:

Նշան.

Սպառնացող պատիմները կայանում են նախ դրամական օժանդակութիւնից զրկելու. (Բոլոր թերթերը թիւրքիայում տէրութիւնից զրամական օժանդակութիւն են ստանում) և զագարեցման մէջ, որ լինում է օրով, շաբաթով, ամսով և կամ ընդ միշտ: Վերջինս ամենածանը պատիմն է արդէն, որին ենթարկուեց և ի միջի այլոց հայոց «Հայրենիք» լրագիրը: Այդ առթիւ թիւրքիական ցենզուրայի խորհրդաւոր պատճառարանութիւնը հետեւալուն էր. «Ի նկատի ունենալով խմբագրութեան ընթացքը...»



Առանձին գրքերով լրյա են տեսել թարգմանչի հետ-
տեւեալ աշխատութիւնները.

1. Զիովաննի Վերդա, Գիւղական ասպետութիւն (պատկեր
իտալական ժողովրդի կեանքից) թարդ. Գերմ. . 15 կ.
2. Մաքս Նորդառ. Հայրենասէր իտալացին, թարդ. Գերմ. 10 կ.
3. Մ. Հալբէ, Սիսէմ. Օսկար Վիշտէ, Երջանիկ իւլիսանը,
թարգմանութիւն գերմաներենից. 15 կ.
4. Իօնաննի Անօ. Երկու Նովելլա թարդ. Գերմ. 10 կ.
5. Հ. Իբսէն. Հասարակութեան նեցուկները, դրամա 4 գործ.
թարդ. Գերմ. 50 կ.
6. Բ. Շտերն, Հիւանդ մարդը, թարդ. Գերմ. 30 կ





39.904

351.74
C-95